ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

_____ _____ 2013թ. _____

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 708-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդված 1-ին մասով, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշմամբ հաստատված Հավելված N 1-ի 6-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի հուլիսի 17-ի՝ <<Հանրակրթական հիմնական դպրոցի 5-9-րդ դասարանների <<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկայի չափորոշիչը և ծրագիրը հաստատելու մասին>> N 708-Ա/Ք հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

/ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2013թ.---------- N հրամանի

<<ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2012թ.հուլիսի 17-ի N708Ա/Ք հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
(5-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)
<<ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>>
ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
(5-9-ՐԴ դասարաններ)
<<ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>>
ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

<<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկայի հիմնական դպրոցի չափորոշչի մշակման համար հիմք են ծառայել <<Կրթության մասին>> և <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքները, Հանրակրթության պետական չափորոշչի հայեցակարգային դրույթները, սկզբունքներն ու պահանջները:

Հայոց եկեղեցու պատմության չափորոշիչը ներառում է՝

- առարկայի հայեցակարգը
- առարկայի ուսումնական նպատակները
- առարկայի բովանդակային պարտադիր միջուկը
- ուսումնական գործունեության տեսակները
- սովորողների պատրաստվածությանը (գիտելիքներ, կարողություններ, հքտութեուններ) ներկայացվող պահանջների և արժեքային համակարգի նկարագրությունները, ընդ որում՝ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները ներկայացված են երեք՝ Ա, Բ, Գ մակարդակներով, որոնք համապատասխանում են՝ Ա - նվազագույն, Բ - միջին, Գ - բարձր պատրաստվածությանը
- գրականության ցանկը

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Առարկայի ընդհանուր նպատակները և խնդիրները

Հայ Առաքելական եկեղեցու պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցում պայմանավորված է աճող սերնդի սոցիալ-հումանիտար կրթությունը լրացնելու, նոր սոցիոմշակութային պայմաններում աշխարհիկ դպրոցում դաստիարակչական գործառույթների զարգացման մանկավարժական պահանջներով, ինչպես նաև կրթական համակարգում ուսուցման հոգևոր-բարոյական հիքերը վերականգնելու ձգտումներով:

Ներկայումս հայկական կրթական համակարգի զարգացման առանձնահատկություններն են արդիականացումը և բարեփոխումը, որոնք կապված են վերջին տարիներին հայ հասարակական կյանքում տեղի ունեցած հոգևոր, սոցիալ-քաղաքական և տնտեսական խոշոր փոփոխությունների հետ: Այդ արդիականացման և բարեփոխումների ուղղություններից է լրացնել կրթության սոցիալական-մարդասիրական բովանդակությունը, որի նպատակն է մասնավորապես վերացնել պետաաշխարհիկ դպրոցի ավանդական հոգևոր-ազգային մշակույթից հրաժարվելու նախընթաց շրջանի հետևանքները: Հայ հոգևոր-մշակութային, հոգևոր-ազգային արժեքները ձևավորվել են նաև Հայոց եկեղեցու ազդեցության և մասնակցության պայմաններում, դրանք խորապես կապված են Հայ Առաքելական դավանանքի հետ: Հետևաբար Հայոց եկեղեցու պատմությունը աճող սերնդի համար կարևոր նշանակություն ունի սոցիալական-մարդասիրական գիտելիքներ ձեռք բերելու և այդ արժեքներին հաղորդակցվելու առումով:

Աճող սերնդի հաղորդակցությունը ավանդական հոգևոր-ազգային արժեքներին իրականացվում է բոլոր քաղաքակիրթ երկրների կրթական պրակտիկայում: ՀՀ Կրթակարգի, որը ձևավորվել է հայ հասարակության կրթությանն ուղղված սոցիալական պատվերի հիման վրա, պահանջներից է, մասնավորապես, որ միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտը <<գիտակցի հայ ժողովրդի ու հայոց պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, լինի ազգային ավանդույթների կրողը, պահպանողն ու փոխանցողը…>> (5-րդ բաժին, բ կետ), <<իմանա իր իրավունքներն ու պարտականություններնը, լինի օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող և հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի>> (5-րդ բաժին, է կետ): Այս պահանջները հիմնավորում են Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրման կարևորությունը և նշանակությունը արդի հանրակրթական դպրոցում:

Քրիստոնեությունը, որպես համաշխարհային, համամարդկային կրոն, որպես գաղափարաարժեքային համակարգ և վարդապետություն, տարածվելուց հետո դարձել է քրիստոնեական ազգերի պատմական զարգացման անկապտելի մասը, իսկ հաճախ նաև՝ հասարակական և ազգային գիտակցության առանցքն ու հենքը: Քրիստոնեությունն առանձնահատուկ դեր է խաղացել Հայոց պատմության մեջ, ինչն անխզելիորեն կապված է Հայ առաքելական եկեղեցու հետ: Հայոց եկեղեցու շնորհիվ քրիստոնեությունը դարձել է հայ ժողովրդի ազգային նկարագրի անբաժանելի մասը:

Հայոց պատմության մեջ Հայ Առաքելական եկեղեցու դերը բացառիկ է: Վիթխարի է նրա ներդրումը հայոց հոգևոր, կրթամշակութային արժեքների ձևավորման և պահպանման, հայոց պետականության ամրապնդման և զարգացման, ազգապահպանության գործում:

Հայ ժողովրդի ազգային-հոգևոր կառույց լինելով հանդերձ՝ Հայոց եկեղեցին միաժամանակ քրիստոնեական ընդհանրական եկեղեցու մի մասն է և արժեհամակարգային բազմաթիվ ընդհանրություններ ունի քրիստոնեական համամարդկային հիմնարար արժեքների (ազատություն, արդարություն, հանդուրժողականություն, հարգանք առ մերձավորը…) հետ:

Դասընթացի նպատակն է՝ ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելու ու հաղորդակից դարձնելու միջոցով նպաստել աճող սերնդի ազգային-հոգևոր նկարագրի ամբողջացմանը:

Այս խնդիրն առանձնակի կարևորություն ունի նաև նոր սերնդին ընդհանուր բարոյական արժեքները և հասկացությունները փոխանցելու առումով, քանի որ ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում եկեղեցին համամարդկային արժեքներ կրող կարևորագույն ինստիտուտ է: Հետևաբար, դասընթացն իր կարևոր նպաստը կբերի սովորողների ընդհանուր աշխարհայացքի, հոգեբանության և բարոյական ըմբռնումների ներդաշնակ ձևավորմանը:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետություն են մուտք գործել տոտալիտար, դեստրուկտիվ (ամբողջատիրական, քայքայիչ, ապակառուցողական), միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից բազմիցս քննադատված կրոնական տարաբնույթ հոսանքներ, որոնք լուրջ նկրտումներ ունեն հանրակրթական ոլորտ ներթափանցելու և այստեղ արմատավորվելու:

Դասընթացի նպատակն է նաև աճող սերնդին հեռու պահել վերոնշյալ բացասական երևույթներից:

Հայաստանի անկախացումից հետո հասարակության մեջ մեծ հետաքրքրություն առաջացավ Հայոց եկեղեցու պատմության, նրա կառույցի, դավանանքի և ընդհանրապես կրոնի ոլորտի նկատմամբ: Հանրակրթական որոշ հաստատություններում տարերայնորեն ներդրվեցին զանազան ծրագրեր (Հայ Առաքելական եկեղեցու պատմութուն, Կրոնի պատմություն, Կրոնագիտություն և այլն), որոնք ապահովված չէին որակյալ և անհրաժեշտ ծրագրերով ու դասագրքերով, դասընթացները պետականորեն չէին սպասարկվում:

Դասընթացի նպատակն է՝ այս ոլորտում մշակել գիտամանկավարժական այնպիսի մոտեցումներ, որոնց հիմքում ընկած են մանկավարժության հիմնարար սկզբունքները՝ մատչելիություն, շարունակականություն, տարիքային առանձնահատկությունների հաշվառում, ինտեգրում այլ առարկաների հետ և այլն:

Հայագիտական առարկաների՝ հայոց պատմության, հայոց լեզվի, հայ գրականության դասավանդումը, և սովորողի կողմից դրանց ամբողջական ընկալումն առանց Հայոց եկեղեցու պատմության իմացության՝ որոշ առումով մնում է թերի:

Դասընթացի նպատակն է՝ ամբողջացնել հայագիտական առարկաների՝ հայոց պատմության և մշակույթի հետ կապված հարցերի շրջանակը՝ ամրապնդելով այդ առարկաներից սովորողների գիտելիքները, լրացուցիչ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել, ինչպես նաև վեր հանել բազմաթիվ իրադարձությունների և երևույթների ընթացքը պայմանավորող հոգևոր-եկեղեցական գործոնները:

Հայ ժողովուրդն ավանդաբար և պետականորեն յուրաքանչյուր տարի նշել և հիմա էլ նշում է ավելի քան երկու տասնյակ տոներ: Այս դասընթացը կօգնի սովորողին հասկանալու այդ տոների և արարողությունների ազգային-եկեղեցական, պատմական և դաստիարակչական իմաստը:

Դասընթացը կօգնի նաև ստուգաբանել մեր կյանքի ու կենցաղի բազմաթիվ հարցեր, որոնց բացատրությունը կապված է ազգային-եկեղեցական ավանդույթների հետ:

Հայաստանի Հանրապետությունն ընդգրկված է համաշխարհային քաղաքակրթական նշանակություն ունեցող այնպիսի խոշոր գործընթացների մեջ, որոնց ազդեցությունն ակնհայտ է մշակույթի և հոգևոր-բարոյական հարցերի բնագավառում:

<<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկան կօգնի ընկալելու արևմտյան, մասնավորապես համաեվրոպական կյանքի շատ արժեքներ, որոնք նույնպես կապված են քրիստոնեության հետ:

Սկզբունքները

Առարկայի մշակման հիմքում ընկած է կրթության աշխարհիկ սկզբունքը: Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրությունը ներկայացվող դասընթացի բովանդակության շրջանակներում հանդիսանում է աշխարհիկ կրթություն՝ կոնկրետ էթնոմշակութային, էթնոդավանական և քաղաքակրթական ուղղվածության կրոնագիտական կրթության տեսակ: Դասընթացը կազմված է գիտամանկավարժական հիմնարար սկզբունքների՝ նյութի մատչելիություն, տարիքային համապատասխանություն, գիտամեթոդական բազմազանություն, պահանջներին համապատասխան:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առարկայի ուսումնական նպատակներն ըստ հանրակրթական դպրոցի աստիճանների

Հայոց եկեղեցու պատմություն դասընթացի մշակման և այն հանրակրթական դպրոցում ներդնելու գործընթացի պրակտիկ փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ կիրառված մոդելը հիմնականում համապատասխանում է առարկայի ընդհանուր նպատակներին և դաստիարակչական գործառույթների նախատեսված պահանջներին: Ըստ այդմ՝ առարկայի նպատակներն են սովորողին

Հիմնական դպրոց

- ծանոթացնել քրիստոնեության հոգևոր, բարոյական, արժեքային համակարգի հիմունքներին և դրանց հաղորդակից միջոցով նրա մեջ դաստիարակել բարություն, ընկերասիրություն, հավատարմություն, հարգանք ծնողների և ավագների նկատմամբ,
- աջակցել կարևորելու հոգևոր - ազգային կառույցի դերը հայոց պատմության մեջ,
- իմանալ և հարգել սեփական ավանդույթները, տոները,
- ձևավորելու աշխարհայացքային պատկերացումներ, ընդլայնելու մտահորիզոնը,
- ձևավորելու հայրենիքի, պետության և հասարակության առջև պարտքի գիտակցություն, սեփական արարքների նկատմամբ պատասխանատու կեցվածք,
- հաղորդել գիտելիքներ հայոց եկեղեցու համակարգված պատմության, ազգային գրականության հիմնական ուղղությունների վերաբերյալ,
- հարգել համաքաղաքացիներին և հայրենակիցներին, օգնել կարևորելու ընտանեկան և հասարակական կյանքում իրավունքների և պարտականությունների փոխկապվածության, քաղաքացիական հասարակության մեջ իրավունքների և պարտականությունների գիտակցման նշանակությունը:

<<ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԻՋՈՒԿ

V ԴԱՍԱՐԱՆ

Ներածություն

Դասընթացի անհրաժեշտությունը: Դասագրքի կառուցվածքը

ԹԵՄԱ 1. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆ

Աստվածաշունչ

Աստվածաշունչը որպես քրիստոնյաների Սուրբ գիրք: Հին կտակարան: Նոր կտակարան: Աստվածաշնչի թարգմանությունը և տարածումը: Աստվածաշունչը հայերի և Հայաստանի մասին:

ԹԵՄԱ 2. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Աշխարհի և մարդու ստեղծումը

Արարչագործություն: Դրախտ: Ադամ և Եվա:

Նոյը և ջրհեղեղը

Նոյ նահապետ: Տապանի կառուցումը: Ջրհեղեղ:

Արարատ լեռը

Նոյն իջնում է Արարատից: Արարատը և Նոյի սերունդները: Հաբեթը, Սեմը, Քամը: Արարատը հայերի համար:

Բաբելոնի աշտարակաշինություն

Նոյի սերնդի տարածումը: Բաբելոնի աշտարակաշինությունը: Հայկ և Բել:

Հայաստանն Աստվածաշնչում

Հայկական լեռնաշխարհը արարչագործության վայր: Հայաստանը Սուրբ Գրքում:

Աբրահամը և նրա սերունդները

Աբրահամ: Մովսես Մարգարե: Աստծու պատվիրանները:

Թագավորները: Բաբելոնյան գերություն

Դավիթ թագավոր: Սողոմոն իմաստուն: Բաբելոնյան գերություն:

Մարգարեներ

ԹԵՄԱ 3. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Հիսուս Քրիստոսի ծննդյան ավետումը

Մարիամ Աստվածածին: Հրեշտակի ավետիսը:

Հիսուս Քրիստոսի ծնունդը

Հիսուսի ծնունդը: Հովիվների այցը: Մոգերի երկրպագությունը: Փախուստ դեպի Եգիպտոս:

Պատանին տաճարում

Պատանի Հիսուսը:Հիսուսը զրուցում է վարդապետների հետ:

Հիսուս Քրիստոսի մկրտությունը

Հովհաննես Մկրտչի ծնունդը: Հովհաննեսի քարոզչությունը: Հիսուսի մկրտությունը:

Հիսուս Քրիստոսի փորձությունները

Առաջին փորձությունը: Երկրորդ փորձությունը: Երրորդ փորձությունը:

Տասներկու աշակերտների ընտրությունը

Հիսուսի կողմից աշակերտների ընտրությունը: Տասներկու առաքյալները:

Հիսուսը օգնում է մարդկանց

Հրաշքներ: Խրատները: <<Ոսկե կանոն>>:

Իմաստուն խորհուրդներ
Հիսուսը՝ ուսուցիչ և վարդապետ: խրատները: Սիրել ծնողներին: Բարեկամություն: Ազնվություն և պարկեշտություն: Իմաստություն:
Ամենամեծ նվերը
Այրի կնոջ լուման: Պարկեշտություն և գոռոզամտություն: Հիսուսը և երեխաները:
Սերմնացանի առակը
Սերմնացանի մասին առակը: Հիսուսը բարի սերմնացան: Առակի մեկնաբանությունը:
Որոմների առակը
Առակի բովանդակությունը: Մեկնաբանությունը:
Ճշմարիտ բարեկամը
Բարի սամարացու մասին առակը: Առակի մեկնաբանությունը:
Մոլորյալ որդու վերադարձը
Մոլորյալ որդու մասին առակը: Մեկնաբանությունը:
Հիսուսի մուտքը Երուսաղեմ
Հիսուսը գնում է Երուսաղեմ: Առևտրականների վտարումը տաճարից:
Վերջին ընթրիքը
Վերջին ընթրիքից առաջ: Խորհրդավոր ընթրիքը: Ոտնլվա: Հիսուսի մատնությունը:
Հիսուս Քրիստոսի խաչելությունը
Հիսուսը Պիղատոսի առջև: Մահվան դատավճիռը: Ճանապարհ դեպի Գողգոթա: Խաչելութունը:
Հիսուսի հարությունը ու Համբարձումը
Հիսուսի թաղումը: Հարությունը: Համբարձումը:

VI ԴԱՍԱՐԱՆ

Ներածություն
Հայ ժողովրդի պատմության մեջ Հայոց եկեղեցու դերի և նշանակության մասին:
ԹԵՄԱ 1. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
Եկեղեցի
Բառի բացատրությունը: Եկեղեցու հիմնադրումը: Հոգևորականություն: Եկեղեցին որպես շինություն:
Քրիստոնեության հիմնական ուղղությունները
Եկեղեցիների հիմնադրումը առաքյալների կողմից: Տիեզերական ժողովներ:
Քրիստոնեության տարբեր ուղղությունների առաջացումը: Արևելյան ուղղափառ եկեղեցիներ: Օրթոդոքս եկեղեցիներ: Կաթոլիկ եկեղեցի: Բողոքականություն:
ԹԵՄԱ 2. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
Հայ առաքելական եկեղեցու նվիրապետությունը
Նվիրապետություն բառի բացատրությունը: Նվիրապետական աստիճանները, դրանց շնորհման կարգը: Կուսակրոն հոգևորականներ: Կաթողիկոս, եպիսկոպոս, քահանա, սարկավագ:
Հաաստանյայց առաքելական եկեղեցու վարչական կառույցը
Ընդհանուր պատկերացում Հայոց եկեղեցու վարչական կառույցի վերաբերյալ: Հայոց եկեղեցու բարձրագույն վարչական մարմինը: Հայոց եկեղեցու պատմականորեն ձևավորված

կառույցները (Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքություններ):

Հայկական եկեղեցիների ճարտարապետական կառուցվածքը

Հայկական Եկեղեցիների արտաքին և ներքին կառուցվածքը:

ԹԵՄԱ 3. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Հայոց եկեղեցու խորհուրդները

Յոթ խորհուրդները: Ձեռնադրություն: Կարգ հիվանդաց:

Մկրտություն և Դրոշմ

Մկրտության խորհրդի իմաստը: Արարողությունը: Դրոշմի խորհուրդը:

Ապաշխարություն

Ապաշխարության խորհրդի իմաստը: Խորհրդի կատարման կարգը:

Հաղորդություն

Հաղորդության խորհրդի իմաստը: Խորհրդի հաստատումը: Արարողակարգը:

Պսակ

Պսակի խորհրդի իմաստը: Արարողակարգը:

ԹԵՄԱ 4. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ

Ընդհանուր ակնարկ եկեղեցական տոների մասին

Տոն հասկացությունը: Տերունական տոն եր: Շարժական և անշարժ տոներ: Սրբերին նվիրված տոներ: Պահքի օրեր:

Ավետման և Ծննդյան տոները

Ավետման տոնը. իմաստը և նշանակությունը: Սուրբ Ծնունդ տոնը. իմաստը և նշանակությունը: Տոնակատարությունները:

Տյառնընդառաջ

Տյառնընդառաջ բառի բացատրությունը: Տոնի իմաստը: Տոնակատարությունը:

Քրիստոսի Պայծառակերպության տոնը: Վարդավառ

Պայծառակերպություն բառի բացատրությունը: Տոնի իմաստը: Տոնակատարությունը:

Ծաղկազարդ

Տոնի իմաստը: Տոնակատարությունը:

Սուրբ Հարություն կամ Զատիկ

Հիսուս Քրիստոսի հարությունը: Տոնի նշանակությունը: Տոնակատարությունը:

Համբարձման տոնը

Հիսուս Քրիստոսի համբարձումը: Տոնի նշանակությունը: Տոնակատարության նկարագրությունը Թումանյանի <<Անուշ>> պոեմում:

Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը: Խաղողօրհնեք

Վերափոխում բառի բացատրությունը: Տոնի իմաստը: Խաղողօրհնեք: Տոնակատարությունը:

Խաչվերաց տոնը

Խաչափայտի գերությունը և ազատումը: Խաչվերաց բառի բացատրությունը: Տոնի իմաստը: Տոնակատարությունը:

Բուն Բարեկենդան

Հովի. Թումանյանի <<Բարեկենդանը>> հեքիաթը և տոնը: Տոնի իմաստը: Պահք բառի բացատրությունը: Պահքի կարևորությունը:

Սուրբ Սարգիս

Սուրբ Սարգսի մասին: Տոնակատարությունը (աղի բլիթ):

Սուրբ Վարդանանց տոնը

Վարդանանք և Ավարայրի ճակատամարտը: Տոնակատարությունը:

Սուրբ Էջմիածնի տոնը

Գրիգոր Լուսավորչի տեսիլքը: Մայր տաճարը: Տոնակատարությունը:

Վարագա Սուրբ Խաչի տոնը

Սուրբ մասունքը: Տոնը:

Թարգմանչաց տոնը

Սուրբ թարգմանիչներ: Գրերի գյուտը: Աստվածաշնչի թարգմանությունը: Տոնակատարությունը:

VII ԴԱՍԱՐԱՆ

Ներածություն

ԹԵՄԱ I. ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆՆԵՐ

Հին հայոց նախաքրիստոնեական հավատալիքները Բնության երևույթների պաշտամունքը: Տոտեմիզմ

Հայոց աշխարհաստեղծման առասպելը

Հեթանոսական դարաշրջանի առասպելները

Հայոց հեթանոսական դիցարանը

Վանի թագավորության դիցարանը

Հին Հնդկական և Զրադաշտական կրոնը

Աշխարհի ստեղծման հին հնդկական առասպելը

Աշխարհի ստեղծման զրադաշտական առասպելը

Զրադաշտի առաքելությունը

Հունա-հռոմեական դիցարանը և Հելլենիստական դարաշրջանի կրոնը

Հունական դիցարանը

Հռոմեական դիցարանը

Արևելքի և Արևմուտքի կրոնական միավորումը և հելլենիստական դիցարանը

ԹԵՄԱ II. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Քրիստոնեության տարածման պատմական պայմանները Պատմական ժամանակաշրջանը

Քրիստոնեական առաջին համայնքները

Քրիստոնեության տարածումը

Քրիստոնեության մուտքը Հայաստան: Հայոց առաջին լուսավորիչները

Թադևոս առաքյալի քարոզչությունը Հայաստանում և նահատակությունը

Բարդուղիմեոս առաքյալի քարոզչությունը Հայաստանում և նահատակությունը

Քրիստոնեության տարածումը Հայաստանում I-III դարերում

Հայաստանի եպիսկոպոսական աթոռներն ու առաջին եպիսկոպոսները

Հալածանքներ քրիստոնյաների դեմ

ԹԵՄԱ III. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ

Քրիստոնեության հռչակումը որպես պետական կրոն Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու նախադրյալները

Ս. Գրիգոր Լուսավորիչ: Հռիփսիմյան կույսերի նահատակությունը

Ս. Գրիգոր Լուսավորիչը՝ Հայոց առաջին հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունն ու գահակալությունը

Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը և Մայր տաճարի կառուցումը

Քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը

ԹԵՄԱ IV. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Հայոց եկեղեցական կառույցի ձևավորումը Քրիստոնեական առաջին դպրոցները

Հայոց եկեղեցու նվիրապետության ձևավորումը

Ս. Գրիգոր Լուսավորչի հետագա գործունեությունը

Հայոց եկեղեցին Ս. Գրիգոր Լուսավորչի հաջորդների օրոք

Արիստակես, Վրթանես և Հուսիկ կաթողիկոսներ

Քրիստոնեության տարածումը Աղվանքում:

Ս. Ներսես Մեծ: Աշտիշատի ժողովը:

Ս. Ներսես Մեծի գահակալության սկիզբը

Աշտիշատի ժողովը

Պետություն – եկեղեցի հարաբերությունները IV դարի երկրորդ կեսին:

Պետություն – եկեղեցի հարաբերությունները

Ս. Ներսես Մեծի գահակալության վերջին շրջանը

Ս. Ներսես Մեծի գործունեության նշանակությունը

Հայոց եկեղեցու ամրապնդումը: Ս.Սահակ Պարթև և Ս. Մեսրոպ Մաշտոց:

Սահակ Պարթևի գահակալությունը:

Քրիստոնեության ամրապնդման հիմնախնդիրը:

Մեսրոպ Մաշտոց: Գրերի գյուտը

Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ վարդապետի գրական-մշակութային ժառանգությունը:

Տիեզերական ժողովները

Նիկիայի ժողովը

Կոստանդնուպոլսի ժողովը

Եփեսոսի ժողովը

ԹԵՄԱ V ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ V-IX ԴԱՐԵՐՈՒՄ

Հայոց եկեղեցին հավատի և հայրենիքի պաշտպան

Շահապիվանի ժողովը: Հովսեփ Ա Հողոցմեցի

Արտաշատի ժողովը: <<Եղծ աղանդոց>>

Առաջին քրիստոնեական մեծ պատերազմը:

Ճակատամարտին հաջորդող դեպքերը:

Վահանանց շարժումը և հանուն հավատի մղված պայքարի հաղթանակը:

Քաղկեդոնի ժողովը, ընդհանրական եկեղեցու բաժանումը և Հայոց եկեղեցին:

Քաղկեդոնի ժողովը

Հայոց եկեղեցու դիրքորոշումը

Դվինի I և II ժողովները

Հայոց եկեղեցու փոխհարաբերությունները Վրաց ու Աղվանից եկեղեցիների հետ V-VII դարերում Վրաց եկեղեցու առանձնացումը

Աղվանից եկեղեցու կազմավորումը

Վաչագան Բարեպաշտ թագավորը: Աղվենի ժողովը

Աղվանից կաթողիկոսությունը VI դարում

Իսլամ:

Իսլամի ծագումը

Իսլամի տարածումն ու դավանանքը

Ս. Հովհան Օձնեցին և պավլիկյան աղանդավորական շարժումը

Արաբական գերիշխանությունը և պավլիկյանները

VIII ԴԱՍԱՐԱՆ

Ներածություն

ԹԵՄԱ I. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ

Հայոց եկեղեցու դերն անկախության վերականգնման և ամրապնդման գործում

Շիրակավանի ժողովը: Զաքարիա Ձագեցի

Գևորգ Բ Գառնեցի

Հովհաննես Ե Դրասխանակերտցի: Կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը Դվինից Աղթամար

Հայոց եկեղեցին Բագրատունյաց թագավորության վերելքի ժամանակաշրջանում:

Անանիա Ա Մոկացիու գործունեությունը: Պայքար Սյունյաց և Աղվանից աթոռների անջատողական ձգտումների դեմ

Խաչիկ Արշարունու գործունեությունը

Հոգևոր և մշակութային վերելքը X դարում

Մայրաքաղաք և կաթողիկոսանիստ Անիի ծաղկումը: Սարգիս Ա Սևանցի

Սարգիս Ա Սևանցու աթոռակալության շրջանը

Անին որպես հոգևոր մայրաքաղաք

Հայոց եկեղեցին Բագրատունյաց թագավորության անկման շրջանում

Անիի թագավորությանը սպառնացող վտանգները և Հայոց եկեղեցին

Պետրոս Գետադարձ

Հայոց եկեղեցու նկատմամբ գործադրված ճնշումներն ու հալածանքները Բագրատունյաց թագավորության անկումից հետո

Հայոց կաթողիկոսական աթոռի դեգերումները

Կաթողիկոսական աթոռի վերականգնումը Անիում

ԹԵՄԱ II. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Հայոց եկեղեցու կազմակերպումը Կիլիկյան Հայաստանում

Հայոց եկեղեցու կառույցների ձևավորումը Կիլիկիայում

Հայրապետական աթոռի հաստատումը Հռոմկլայում

Կաթողիկոսների ընտրության նոր կարգը

Կիլիկյան արքունիքի և Հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունները

Խառնակ շրջան

Հայ-հռոմեական և հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները

Հայ-հռոմեական եկեղեցական հարաբերությունները

Հայ և Բյուզանդական եկեղեցիների միավորման խնդիրը

Հռոմկլայի եկեղեցական ժողովը

Հայոց եկեղեցին Զաքարյան Հայաստանում

Հայոց եկեղեցու կազմակերպումը Զաքարյան Հայաստանում

Եկեղեցու հոգևոր-մշակութային գործունեությունը

Կիլիկյան Հայաստանի և Մեծ Հայքի եկեղեցական հարաբերությունները

Սսի 1243 թ. եկեղեցական ժողովը

Քրիստոնեական եկեղեցիների միավորման փորձերը

Հայրապետական աթոռի հաստատումը Սսում

Պայքար եկեղեցիների միավորման փորձերի դեմ
ԹԵՄԱ III. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ
Հայոց եկեղեցին XIV դարի վերջերին և XV սկզբին
Հայոց եկեղեցին և միարարական շարժումը
Հայոց եկեղեցին և պապականությունը
Կաթողիկոսական աթոռը Կիլիկիայի Հայոց թագավորության անկումից հետո
Կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Էջմիածնում
Կաթողիկոսական աթոռի տեղափոխման անհրաժեշտությունը
1441 թ. Ազգային-եկեղեցական ժողովը և կաթողիկոսական աթոռի տեղափոխումը
Հայոց եկեղեցու նվիրապետությունը
Ամենայն Հայոց կաթողիկոսությունը
Աղվանից կաթողիկոսությունը
Աղթամարի կաթողիկոսությունը
Սսի կաթողիկոսությունը
Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը
Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը
Մետրոպոլիտությունը
Եպիսկոպոսությունները
Հայոց եկեղեցին և հայ ազատագրական շարժումը XV- XVII դարերում
Հայկական պետականության վերականգնման փորձ XV դարի կեսերին
Հայաստանն ազատագրելու ծրագրերը: Ստեփանոս Սալմաստեցի: Միքայել Սեբաստացի
Հոգևոր-մշակութային կյանքի զարթոնքը: Մովսես Գ Տաթևացի
Հայկական տպագրության սկզբնավորումը
Մայր աթոռի և հոգևոր-մշակութային կյանքի զարթոնքը: Մովսես Գ Տաթևացի
Հակոբ Ջուղայեցի: Ս. Էջմիածնի 1677 թվականի գաղտնի խորհրդաժողովը
Կաթոլիկ շարժումը հայոց մեջ: Մխիթարյանք
Կաթոլիկության տարածումը հայերի մեջ
Մխիթար Սեբաստացին և Մխիթարյանք
Հայոց եկեղեցին XVIII դարում
Հայոց եկեղեցին XVIII դարի առաջին կեսին: Սիմեոն Երևանցի
Հայոց եկեղեցին XVIII դարի վերջին

IX ԴԱՍԱՐԱՆ

Ներածություն
ԹԵՄԱ I. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՎ 1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ
Հայոց եկեղեցին XIX դարի սկզբին
Ռուսաստանը և Հայոց եկեղեցին
Դանիել Սուրմառեցին և Սինոդի ստեղծումը
Նվիրապետական աթոռները XIX դարի սկզբին
Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Ներսես Ե Աշտարակեցի
Ներսես Աշտարակեցու գործունեությունը 1826-1828 թթ.
Ներսես Աշտարակեցին Հայոց կաթողիկոս

Ներսես Ե կաթողիկոսը և արևմտահայությունը: Ներսես Աշտարակեցու հոգևոր-մշակութային գործունեությունը

Ցարական կառավարությունը և Հայոց եկեղեցու փոխհարաբերությունների իրավական կարգավարումը

Կանոնադրության երկու նախագծերը

<<Պոլոժենիե>>

Հայոց ազգային եկեղեցական կյանքը 1820-60-ական թթ.

Հայ կաթոլիկ եկեղեցու առանձնացումը և նկրտումները

Հայ բողոքական եկեղեցին

Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի

ԹԵՄԱ II. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՅՔԱՐ ՌՈՒՍԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ - XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Հայոց եկեղեցու կրթամշակութային ձեռնարկները

Հայոց եկեղեցին՝ կրթության գործի կազմակերպիչ

□Արարատ□ ամսագրի հրատարակումը

Պայքար հայկական դպրոցների վերաբացման համար

Հայոց եկեղեցու պայքարը ցարական ինքնակալության դեմ: Մկրտիչ Ա Խրիմյան

Հայոց եկեղեցու պայքարը ցարական ինքնակալության դեմ

Հայոց եկեղեցին հայ-թաթարական ընդհարումների ժամանակ

Եկեղեցու բարեկարգման անհրաժեշտությունը

ԹԵՄԱ III. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ

Հայոց եկեղեցին և Հայկական հարցը

Հայկական հարցի միջազգայնացումը և Հայոց եկեղեցին

□Երկաթե շերեփի□ խորհուրդը

Եկեղեցու մասնակցությունը XIX դ. վերջի և XX դ. սկզբի ազատագրական պայքարին

Հայ հոգևորականության մասնակցությունը ազատագրական շարժմանը

Խանասորի արշավանքը

Մ. Խրիմյանի ազգանվեր գործունեությունը

Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը և Հայկական հարցի վերաբացումը

Հայոց Մեծ եղեռնը և եկեղեցին

Հայոց ցեղասպանությունը և Հայոց եկեղեցին

Արևմտահայ գաղթականությունը և Հայոց եկեղեցին

ԹԵՄԱ IV. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ-ՆԵՐԻՆ

1918 թվականի հերոսամարտերը և եկեղեցին

Հայոց եկեղեցու մասնակցությունը Մայիսյան հերոսամարտերին

Եկեղեցու գործունեությունը 1918-1920 թվականներին

Հայոց եկեղեցու գործունեությունը անկախ պետականության կառուցման տարիներին

Եկեղեցի-պետություն □դաշնագիրը□

Ներեկեղեցական կյանքի բարենորոգության հարցը

ԹԵՄԱ V. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Խորհրդային իշխանության քաղաքականությունը եկեղեցու նկատմամբ

Հայոց եկեղեցին և խորհրդային իշխանությունը

Բռնություններ և հալածանքներ: Եկեղեցիների փակումը

Հալածանքների նոր շրջան: Խորեն Ա Մուրադբեկյան
Բոլշևիկյան իշխանությունները և կաթողիկոսի ընտրությունը
Հայոց կաթողիկոսության վերացման փորձերը: Խորեն կաթողիկոսի սպանությունը
Հայոց եկեղեցին Երկրորդ աշխարհամարտի տարիներին
Եկեղեցին Հայրենական պատերազմի նախօրյակին
Եկեղեցին Հայրենական պատերազմի տարիներին
Կաթողիկոսական ընտրություններ: Գևորգ Զ Չորեքչյան
1945 թ. Ազգային-եկեղեցական ժողովը
Գևորգ Զ Չորեքչյան
Աշխատանքներ՝ սփյուռքի հետ կապերը վերականգնելու և հոգևոր-մշակութային կյանքը վերականգնելու ուղղությամբ
Հայոց եկեղեցու վերելքը: Վազգեն Ա
Վազգեն Ա Պալճյան (1955-1994)
Վազգեն Ա-ի եկեղեցաշինական հոգևոր-մշակութային գործունեությունը
Ազգային նոր շարժումը և Հայոց եկեղեցին
ԹԵՄԱ VI. ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔԻ ՇՐՋԱՆ
Եկեղեցին հայոց նորանկախ պետականության ստեղծման և ամրապնդման տարիներին
Մասնակցությունը արցախյան ազատամարտին
Եկեղեցի – պետություն փոխհարաբերությունները
Ներեկեղեցական կյանքը
Հայոց եկեղեցու միասնության ամրապնդումը: Գարեգին Ա
Գարեգին Ա Սարգսյանի ընտրությունը
Եկեղեցի – պետություն համագործակցության ամրապնդումը
Եկեղեցու ներքին միասնության ամրապնդումը: Հոգևոր-մշակութային գործունեության ընդլայնումը
Եկեղեցու միջազգային հեղինակության աճը
Հայաստանի կրոնական համայնքները
Հայ կաթողիկե եկեղեցին
Հայ ավետարանական եկեղեցին
Տարաբնույթ կրոնական հոսանքներ
Գարեգին Բ: Վերելքի տարիներ
Հայոց 132-րդ հայրապետի ընտրությունը
Գարեգին Բ կաթողիկոսի գործունեությունը
1700-ամյակի տոնակատարությունը
Եկեղեցի – պետություն հարաբերությունները:

ՍՈՎՈՐՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

5-9-րդ դասարաններ

Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ

Ուսումնառության արդյունքում սովորողը պետք է՝

5-րդ դասարան

1. **Աստվածաշունչ մատյան**		
Ա մակարդակ	**Բ մակարդակ**	**Գ մակարդակ**
Իմանա՝ <<Աստվածաշունչ>> մատյանի՝ որպես քրիստոնյաների Սուրբ գրքի, <<Աստվածաշունչ>> մատյանի հատվածների, Հին և Նոր Կտակարանների գրքերի քանակի, հայերեն թարգմանության հեղինակների մասին **Կարողանա՝** նշել <<Աստվածաշունչ>> մատյանի բովանդակության հիմանական առանձնահատկությունները	**Իմանա՝** • Աստվածաշնչի ստեղծման ընթացքի, տարածման, Նոր Կտակարանի հեղինակների, գրքերի հիմնական բովանդակության մասին • Աստվածաշնչի հայերեն տպագրության տարեթիվը **Կարողանա՝** արժևորել <<Աստվածաշունչ>> մատյանի հայերեն թարգմանության կարևորությունը	**Իմանա՝** <<Աստվածաշունչ>> մատյանի հիմնական գաղափարի, Հին և Նոր Կտակարանների գրքերի և նրանց հիմնական բովանդակության մասին **Կարողանա՝** ներկայացնել Հին և Նոր Կտակարանների գրքերի առանձնահատկությունները
2. **Աշխարհի և մարդու ստեղծումը**		
Իմանա՝ Արարչագործության պատմության և առաջին մարդկանց մասին **Կարողանա՝** նկարագրել առաջին մարդկանց կյանքը դրախտում	**Իմանա՝** Արաչագործության հաջորդականության և դրախտի մասին **Կարողանա՝** ներկայացնել դրախտից Ադամի և Եվայի վտարման պատճառները	**Իմանա՝** Դրախտի գտնվելու վայրի մասին **Կարողանա՝** վերլուծել անհնազանդության արդյունքները

	***3.* Նոյը և ջրհեղեղը**	
Իմանա՝ Նոյի և ջրհեղեղի մասին, **Կարողանա՝** ներկայացնել ջրհեղեղի պատճառները	**Իմանա՝** Տապանի կառուցման Աստծո պատվերի, ջրհեղեղի տևողության և Նոյան տապանի կանգ առնելու վայրի մասին **Կարողանա՝** բացատրել տապան, զոջալ, ուխտ հասկացությունները	**Իմանա՝** Ջրհեղեղի ժամանակ և դրանից հետո տեղի ունեցած իրադարձությունները **Կարողանա՝** գնահատել Նոյի ու նրա որդիների հետ Աստծո կնքած ուխտի կարևորությունը
	***4.* Արարատ լեռը**	
Իմանա՝ Ջրեհեղից հետո Նոյի բնակության վայրի և զբաղմունքի մասին **Կարողանա՝** ▪ պատկերավոր նկարագրել Արարատ լեռը	**Իմանա՝** Նոյի որդիների անունները և ավանդության մեջ հիշատակված մեր առաջին բնակավայրերի անվանումները **Կարողանա՝** բացատրել Երև անդ, խաղողի որթ և զինանշան հասկացությունները	**Իմանա՝** Արարատ լեռան հետ կապված դասանյութի հիշատակումները **Կարողանա՝** արժևորել Արարատ լեռան դերը մադկության վերածնման պատմության մեջ և հայերի կյանքում
	***5.* Բաբելոնի աշտարակաշինություն**	
Իմանա՝ Նոյի որդիների բնակության վայրի, Հայկի Բաբելոնից հեռանալու և Հայաստանում բնակություն հաստատելու մասին: **Կարողանա՝** ներկայացնել աշտարակի կառուցման և Հայկի՝ Բելին չենթարկվելու պատճառները	**Իմանա՝** Աշտարակի կառուցման պատմությունը: **Կարողանա՝** բացատրել բաբելոնյան աշտարակաշինություն, լեզուների բաժանում, լայնալիճ աղեղ հասկացությունները	**Իմանա՝** Հայկի և Բելի ճակատամարտի պատմությունը **Կարողանա՝** • համեմատել Հայկին ու Բելին: • արժևորել Հայկի ու նրա սերունդների Բելի դեմ տարած հաղթանակի նշանակությունը հայերի համար

6. Հայաստանն Աստվածաշնչում		
Իմանա՝ Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող գետերը, Հայաստանի մասին հիշատակություն թողած մարգարեների անունները **Կարողանա՝** Ներկայացնել □Ծննդոց□ գրքում Եդեմ-դրախտավայրի մասին եղած տեղեկությունը	**Իմանա՝** <<Աստվածաշունչ>> մատյանում Երեմիա մարգարեի կողմից Հայաստանի վերաբերյալ թողած տեղեկությունների մասին **Կարողանա՝** բացատրել Թորգոմի տուն, Թորգոմածին հասկացությունները	**Իմանա՝** <<Աստվածաշունչ>> մատյանում Եզեկիել մարգարեի կողմից Հայաստանի վերաբերյալ թողած տեղեկությունների մասին **Կարողանա՝** Քարտեզի վրա ցույց տալ Եփրատ, Տիգրիս, Գեհոն, Փիսոն գետերը: Ըստ ժամանակաշրջանների համակարգված ներկայացնել <<Աստվածաշունչ>> մատյանում Հայաստանի և հայերի մասին եղած տեղեկությունները
7. Աբրահամը և նրա սերունդները		
Իմանա՝ Աբրահամի, Հակոբի, Մովսեսի, իսրայելցիների Եգիպտոսում բնակություն հաստատելու և այնտեղից դուրս գալու մասին **Կարողանա՝** • ներկայացնել Եգիպտոսից իսրայելցիների դուրս գալու պատճառները • թվարկել Մովսեսին տրված պատվիրանները	**Իմանա՝** Աբրահամին տրված Աստծո պատվերի, Մովսեսի առաջնորդությամբ իսրայելցիների Եգիպտեսից դուրս գալու և Կարմիր ծովի հրաշքի մասին: **Կարողանա՝** • բացատրել պատվիրան տերմինը • ներկայացնել Քանան, Եգիպտոս, Կարմիր ծով, Սինա լեռ պատմաաշխարհագրական անվանումները	**Իմանա՝** Սինա անապատում իսրայելցիների հաստատվելու մասին և Մովսեսին տրված պատվիրանները: **Կարողանա՝** • մեկնաբանել Աստծո կողմից Աբրահամին և նրա սերունդներին տրվող օգնությունը • բացատրել Մովսեսին տրված պատվիրանները

8. Թագավորներ: Բաբելոնյան գերություն		
Իմանա՝ Իսրայելցիների Քանան երկրում բնակվելու, Դավիթ և Սողոմոն Իմաստուն թագավորների մասին: **Կարողանա՝** մեկնաբանել ժողովրդի կողմից Սողոմոնին տրված <<Իմաստուն>> պատվանունը	**Իմանա՝** Դավիթ և Սողոմոն թագավորների կատարած շինարարական աշխատանքների մասին **Կարողանա՝** • բացատրել դեգերել, օրհներգ, բաբելոնյան գերություն, Փրկիչ, պաշտամունք, Ք.ա. բառերն ու արտահայտությունները: • համեմատել Դավիթ և Սողոմոն Իմաստուն թագավորների գործունեությունները	**Իմանա՝** Սողոմոն Իմաստունի մահից հետո Իսրայելցիների պետության պառակտման և իսրայելցիների գերեվարության մասին **Կարողանա՝** • ներկայացնել իսրայելցիների պետության պառակտման պատճառները • մեկնաբանել թագավորության վերականգնման իսրայելցիների անկարողության պատճառները
9. Մարգարեներ		
Իմանա՝ մարգարեների անունները **Կարողանա՝** բացատրել. Աստծո կողմից մարգարեների ընտրության պատճառները	**Իմանա՝** մարգարեների և նրանց գործունեության մասին **Կարողանա՝** բացատրել Մեսիա, Եսայի անվանումները	**Իմանա՝** Եսայի մարգարեի կանխատեսումը Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին **Կարողանա՝** համեմատել մարգարեներին գուշակների և պայծառատեսների հետ, ներկայացնել տարբերությունները
10. Հիսուս Քրիստոսի ծննդյան ավետումը		
Իմանա՝ • Մարիամ Աստվածածնի ծնողների անունները և նրա ծննդավայրի անունը, • Մարիամի՝ Հովսեփի հետ նշանադրության և Գաբրիել հրեշտակի հետ հանդիպման մասին **Կարողանա՝** • նկարագրել Մարիամ Աստվածածնի մանկությունը	**Իմանա՝** • Հովսեփի հայրենի քաղաքի անվանումը • Գաբրիել հրեշտակի՝ Մարիամին հայտնած ավետիսը **Կարողանա՝** • բացատրել Հիսուս անվանումը • բացատրել հյուսն, ավետել, ավետիս, մեղք բառերը	**Իմանա՝** Գաբրիել հրեշտակի՝ Հովսեփին տված պատվերը **Կարողանա՝** • բացատրել մանուկ Մարիամին տաճարին նվիրելու՝ ծնողների քայլը

11. Հիսուս Քրիստոսի ծնունդը		
Իմանա՝ • Հիսուս Քրիստոսի ծննդյան քաղաքը • հովիվների և մոգերի երկրպագության մասին • Հրեաստանում իշխող արքայի անվանումը **Կարողանա՝** բացատրել Հովսեփի ու Մարիամի՝ Բեթղեհեմ ուղևորվելու նպատակը	**Իմանա՝** • Օգոստոս կայսեր կողմից անցկացվող մարդահամարի մասին • մոգերի ուղևորության, Հերովդեսի հետ նրանց հանդիպման և պայմանավորվածության մասին **Կարողանա՝** • բացատրել Քրիստոս անվանումը • բացատրել մարդահամար, իջևանատուն, մսուր, մոգ բառերը	**Իմանա՝** • Գաբրիել հրեշտակի՝ Հովսեփին տված պատվերի մասին • Հովսեփի, Մարիամի և մանուկ Հիսուսի Եգիպտոս ուղևորվելու և Նազարեթ վերադառնալու մասին • մոգերի բերած ընծաները **Կարողանա՝** • համեմատել հովիվների և մոգերի՝ Հիսուսի ծննդյան մասին տեղեկանալը և նրանց երկրպագությունները • բացատրել Հերովդեսի՝ մանուկ Հիսուսին սպանելու մտադրության պատճառները
12. Պատանին տաճարում		
Իմանա՝ • Զատկի տոների մասին • 12 ամյա Հիսուսի՝ Զատկի տոնի կապակցությամբ Երուսաղեմ ուղևորվելու մասին • Հիսուսի տիրապետած արհեստը **Կարողանա՝** • նկարագրել Հիսուս Քրիստոսի մանկությունը	**Իմանա՝** մանուկ Հիսուսի՝ առանց զգուշացնելու, Երուսաղեմում մնալու և ծնողների՝ Երուսաղեմ վերադարձի մասին **Կարողանա՝** բացատրել վարդապետ հասկացությունը	**Իմանա՝** Տաճարում Հիսուսի և վարդապետերի զրույցի մասին **Կարողանա՝** մեկնաբանել. Հիսուսի <<…չգիտեիք, որ ես Հորս տանը պետք է լինեմ>> խոսքերը
13.Հիսուս Քրիստոսի մկրտությունը		
Իմանա՝ • Հովհաննես Մկրտչի ծննդյան և նրա՝ Հորդանան գետի ափին հաստատվելու մասին • Հիսուս Քրիստոսի մկրտությունը **Կարողանա՝** բացատրել ժողովրդի կողմից Հովհաննեսին տրված Մկրտիչ անվանման պատճառը	**Իմանա՝** Զաքարիայի և Գաբրել հրեշտակի հանդպման, ծեր քահանայի թերահավատության և դրա արդյունքի մասին **Կարողանա՝** • բացատրել Հովհաննես անվանումը • բացատրել մկրտել, խնկարկել, քարոզել, խոստովանել, ապաշխարել հասկացությունները	**Իմանա՝** • Հովհաննես Մկրտչի քարոզների մասին • Հիսուս Քրիստոսի մկրտության մասին • Մկրտության պահին Ս. Երրորդության միասնական հայտնության մասին **Կարողանա՝** բացատրել Հովհաննես Մկրտչի՝ Հիսուս Քրիստոսին մկրտել չցանկանալու, քայլի պատճառ-

		ները
14. Հիսուս Քրիստոսի փորձությունները		
Իմանա՝ • Հիսուս Քրիստոսի՝ 40 օր անապատում առանձնանալու մասին • Հիսուս Քրիստոսի փորձությունների քանակը **Կարողանա՝** բացատրել Հիսուս Քրիստոսի անապատում առանձնանալու պատճառները	**Իմանա՝** • Հիսուս Քրիստոսի երեք փորձությունները **Կարողանա՝** բացատրել սատանա, փորձություն, մոլորեցնել, երկրպագել հասկացությունները	**Իմանա՝** Հիսուս Քրիստոսի կողմից սատանային տրված հաղթական պատասխանները **Կարողանա՝** համեմատել Հիսուսի և Ադամի փորձությունները
15. Տասներկու աշակերտների ընտրությունը		
Իմանա՝ • Հիսուս Քրիստոսի կողմից առաքյալների ընտրության, երեք տարի նրանց հետ շրջելու մասին • Հիսուս Քրիստոսի ձկնորս և մաքսավոր առաքյալների մասին • Հիսուս Քրիստոսին առաքյալների դիմելաձևը **Կարողանա՝** ներկայացնել Հիսուս Քրիստոսի և առաքյալների հարաբերությունները	**Իմանա՝** Հիսուս Քրիստոսի կողմից առաքյալներին տրված պատվերի, բազմաթիվ երկրներում նրանց ծավալած գործունեության մասին **Կարողանա՝** բացատրել մաքսավոր, ընկճվել, Տեր բառերը	**Իմանա՝** 12 առաքյալների անունները **Կարողանա՝** հիմնավորել Հիսուս Քրիստոսի կողմից աշակերտների ընտրության նպատակը
16.Հիսուսն օգնում է մարդանց		
Իմանա՝ • Հիսուս Քրիստոսի՝ հրաշքներ գործելու պատճառները • Ոսկե կանոնը **Կարողանա՝** թվարկել Հիսուս Քրիստոսի կողմից գործած մի քանի հրաշքներ	**Իմանա՝** • Հիսուս Քրիստոսի ծավալած գործունեության մասին **Կարողանա՝** բացատրել հրաշք, անդամալույծ, բորոտ, փարիսեցի բառերը	**Իմանա՝** Հիսուս Քրիստոսի հանդեպ փարիսեցիների և իշխանավորների վատ վերաբերմունքի պատճառների մասին **Կարողանա՝** բացատրել <<Ոսկե կանոնի>> իմաստը
17. Իմաստուն խորհուրդներ		
Իմանա՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ փարիսեցիների և	**Իմանա՝** Հիսուս Քրիստոսի՝ ծնողասիրության, բարեկա-	**Իմանա՝** ազնիվ լինելու և սուտ չխոսելու մասին Հիսուսի

իշխանավորների վատ վերաբերմունքի պատճառները **Կարողանա՝** բացատրել Հիսուս Քրիստոսի հանդեպ ժողովրդի վերաբերմունքի պատճառները	մության, ընկերասիրության, ներողամտության, գթառատության վերաբերյալ խրատները **Կարողանա՝** • բացատրել դպիր, ներողամիտ, գթառատ բառերի իմաստը	պատգամները **Կարողանա՝** համեմատել ժայռի վրա իր տունը կառուցած իմաստուն մարդուն՝ Հիսուս Քրիստոսի խրատներին հետևող մարդկանց հետ
18. Ամենամեծ նվերը		
Իմանա՝ Այրի կնոջ նվիրատվության մասին **Կարողանա՝** բացատրել. ինչու՞ այրի կնոջ գցած երկու լուման ավելի շատ էր մյուսների գցածից	**Իմանա՝** Հիսուս Քրիստոսի՝ երեխաների հանդեպ ունեցած վերաբերմունքի մասին **Կարողանա՝** բացատրել պարկեշտություն, բարեպաշտություն, գոռոզություն հասկացությունները	**Իմանա՝** Տաճարում աղոթող մաքսավորի և փարիսեցու պատմությունը **Կարողանա՝** մեկնաբանել. ինչու մաքսավորը ներում ստացավ, իսկ փարիսեցին՝ ոչ:
19. Սերմնացանի առակը		
Իմանա՝ <<Սերմնացանի առակ>>-ի հիմնական բովանդակությունը **Կարողանա՝** բացատրել Հիսուս Քրիստոսի՝ առակներով խոսելու պատճառները	**Իմանա՝** <<Սերմնացանի առակի>>՝ Հիսուս Քրիստոսի կողմից տրված, մեկնությունը **Կարողանա՝** • բացատրել ապառաժ, քարոգ, պարարտ բառերը	**Իմանա՝** ինչպիսի՞ մարդկանց են խորհրդանշում պարարտ հողը, ապառաճը, փշերը և ճանապարհը **Կարողանա՝** համեմատել Հիսուս Քրիստոսի առակները այլ առակների հետ
20. Որոմների առակը		
Իմանա՝ □Որոմների առակի□ հիմնական բովանդակությունը **Կարողանա՝** բացատրել հողատիրոջ՝ որոմը ցորենից անմիջապես մաքրել թույլ չտալու քայլի պատճառները	**Իմանա՝** առակում ագարակի, ցորենի, որոմի խորհրդանիշները **Կարողանա՝** բացատրել որոմ, ագարակ, հատուցում բառերը	**Իմանա՝** չար մարդկանց տրված, զղջալու և ուղղվելու, հնարավորության մասին **Կարողանա՝** մեկնաբանել <<ամեն մարդ իր գործերի համար արժանի հատուցում պետք է ստանա>> միտքը
21. Ճշմարիտ Բարեկամը		
Իմանա՝ <<Բարի սամարացին>> առակի հիմնական բովանդակությունը	**Իմանա՝** Հիսուս Քրիստոսի՝ երիտասարդին տված, խրատների մասին	**Իմանա՝** Սամարիա քաղաքի գտնվելու վայրը

Կարողանա՝ բնութագրել հրեա հոգևորականին և տաճարի պաշտոնյային	**Կարողանա՝** համեմատել հրեա հոգևորականին և տաճարի պաշտոնյային բարի սամարացու հետ	**Կարողանա՝** Մեկնաբանել <<Բարի սամարացին>> առակը
22. <<Մոլորյալ որդու վերադարձը>>		
Իմանա՝ <<Մոլորյալ որդու վերադարձը>> առակի հիմնական բովանդակությունը **Կարողանա՝** վերլուծել կրտսեր որդու տուն վերադառնալու որոշման պատճառները	**Իմանա՝** Հոր՝ կրտսեր որդուն ընդունելու մանրամասները **Կարողանա՝** • համեմատել երկու եղբայրներին • բացատրել վատնել, զրկանք, մոլորյալ, մեղանչել բառերը	**Իմանա՝** Հոր և ավագ որդու զրույցի մանրամասները **Կարողանա՝** մեկնաբանել առակի իմաստը
23.Հիսուսի մուտքը Երուսաղեմ		
Իմանա՝ • Երուսաղեմ մեկնելուց առաջ Հիսուս Քրիստոսի բնակության վայրը • Երուսաղեմ ուղևորվելու նպատակը **Կարողանա՝** • Բացատրել Հիսուս քրիստոսի Երուսաղեմ մուտքի ժամանակ ժողովրդի ցնծության պատճառները	**Իմանա՝** Երուսաղեմի ճանապարհին Հիսուս Քրիստոսին դիմավորելու որոշ մանրամասների մասին **Կարողանա՝** բացատրել քահանայապետ բառը	**Իմանա՝** Երուսաղեմում երկու օրերի ընթացքում Հիսուս Քրիստոսի կատարած գործողությունները **Կարողանա՝** բացատրել առևտրականներին տաճարից վտարելու պատճառները
24.Խորհրդավոր ընթրիքը		
Իմանա՝ • Տոնը, որին պատրաստվում էր ժողովուրդը • Հիսուս Քրիստոսի կողմից աշակերտների ոտքերի լվացման մասին • Հիսուս Քրիստոսի մատնության գինը և նշանը **Կարողանա՝** համեմատել Հուդայի և մյուս առաքյալների գործողությունները Վերջին ընթրիքի ժամանակ տեղի ունեցած զրույցի ընթաքում	**Իմանա՝** • մատնության վերաբերյալ, ընթրիքի ժամանակ, տեղի ունեցած զրույցի մասին • ընթրիքի ավարտից հետո Հիսուսի մեկնած վայրը **Կարողանա՝** բացատրել Երեսուն արծաթ, Հուդայի համբույր արտահայտությունները	**Իմանա՝** • Գեթսեմանիի պարտեզի գտնվելու վայրը • Զատկի տոնի նախօրյակին Երուսաղեմ մեկնած երեք առաքյալների անունները **Կարողանա՝** մեկնաբանել Հիսուսի կողմից աշակերտների ոտքերը լվանալը
25.Հիսուս Քրիստոսի խաչելությունը		
Իմանա՝ • Հրեաստանի կուսակալ Պիղատոսի մոտ Հիսու-	**Իմանա՝** • զայրացած ամբոխի՝ Բարաբբային ազատելու,	**Իմանա՝** • Գողգոթայի գտնվելու վայրը

սին տանելու մասին • քահանայապետերի մեղադրանքների մասին • հռոմեացի զինվորների կողմից Հիսուսին ծաղրուծանակի ենթարկելու մասին **Կարողանա՝** բացատրել Հիսուս Քրիստոսի կողմից խաչի տանելու պատճառները	պահանջի մասին • մահվան դատավճռի մասին **Կարողանա՝** բացատրել <<ձեռքերը լվանալ>>, <<իր խաչը տանել>>, <<փշե պսակ>>, <<կարմիր վերնազգեստ>>, <<խաչի ճանապարհ>> արտահայտությունները	• հատկապես խաչի վրա մահվան դատապարտելու պատճառը **Կարողանա՝** • ներկայացնել Հիսուսին մահվան դատապարտելու վերաբերյալ որոշման մանրամասները և մեկնաբանել Պիղատոսի գործողությունները
26.Հիսուսի թաղումն ու հարությունը		
Իմանա՝ • Հովսեփի և Հիսուս Քրիստոսին խաչից իջեցնելու մասին • Հարությունից մինչև Համբարձումը տևած օրերի քանակը • Հիսուս Քրիստոսի համբարձվելու վայրը **Կարողանա՝** բացատրել՝ խաչյալներին խաչից շուտ իջեցնելու քահանայապետերի ցանկության պատճառը	**Իմանա՝** Հիսուս Քրիստոսի հարության պահին և հաջորդ առավոտյան տեղի ունեցած իրադարձությունների մասին **Կարողանա՝** • բացատրել <<հարություն առնել>>, <<համբարձվել>> հասկացությունները	**Իմանա՝** համբարձվելուց առաջ Հիսուս Քրիստոսի կողմից առաքյալներին տրված պատգամների մասին **Կարողանա՝** բացատրել Հիսուս Քրիստոսի գերեզմանին պահակներ դնելու պատճառները

6-րդ դասարան

ԹԵՄԱ 1. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ		
Եկեղեցի		
Ա մակարդակ	**Բ մակարդակ**	**Գ մակարդակ**
Իմանա՝ • Քրիստոնեական եկեղեցու հիմնադրի անունը, • քրիստոնյա ժողովուրդների անուններ **Կարողանա՝** թվարկել Հայաստանի նշանավոր եկեղեցիներից մի քանիսի անունները	**Իմանա՝** • եկեղեցի բառի ծագումը և բացատրությունները • հոգևորականների մասին **Կարողանա՝** բացատրել Աստծո տուն, պատարագ, ժամերգություն, հավատացյալ, եկեղեցի օծել, գործող եկեղեցի, հասկացություններն ու արտահայտությունները	**Իմանա՝** ձեռնադրության և առաջին ձեռնադրվողների մասին **Կարողանա՝** ներկայացնել իրենց բնակավայրի եկեղեցու անունը, պատմությունը
Քրիստոնեության հիմնական ուղղությունները		
Իմանա՝ • Հայոց եկեղեցու հիմնադիր առաքյալների անունները • Քրիստոնեական եկեղեցու առաջին մեծ բաժանման տարեթիվը **Կարողանա՝** թվարկել քրիստոնեության հիմնական չորս ուղղությունների անունները	**Իմանա՝** • Քրիստոնեական եկեղեցու երկրորդ մեծ բաժանումը, օրթոդոքս, կաթոլիկ եկեղեցիների առաջացումը, նրանց առաջնորդների անվանումները, նստավայրերը • Արևելյան ուղղափառ եկեղեցու առաջացման մասին • բողոքական եկեղեցու առաջացման ժամանակաշրջանը **Կարողանա՝** բացատրել օրթոդոքս, կաթոլիկ, պատրիարք, մետրոպոլիտ, կարդինալ, բառերը	**Իմանա՝** • Առաջին տիեզերական ժողովների գումարման վայրերն ու տարեթվերը • Արևելյան ուղղափառ եկեղեցիների անունները • օրթոդոքս, ուղղափառ, բողոքական ժողովուրդների անուններ **Կարողանա՝** • բացատրել բողոքական եկեղեցու առաջացման պատճառները • լրացնել քրիստոնեության հիմնական չորս ուղղությունների աղյուսակը

ԹԵՄԱ 2. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ		
Հայ առաքելական եկեղեցու նվիրապետությունը		
Իմանա՝ • առաջին քրիստոնյա պետությունը, Հայոց եկեղեցու նվիրապետական ամենաբարձր աստիճանը, կաթողիկոսի ընտրության և ձեռնադրության վայրը, ներկայիս Հայոց կաթողիկոսի անունը **Կարողանա՝** բացատրել եկեղեցում հոգևորականների դերը	**Իմանա՝** • Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու տարեթիվը • Հայոց եկեղեցու նվիրապետական աստիճանների քանակը, շնորհման կարգը, երեք բարձր աստիճանները, **Կարողանա՝** բացատրել նվիրապետություն, թեմ, ծես, մյուռոն, կաթողիկոս, վարդապետ, եպիսկոպոս,, կուսակրոն բառերն ու հասկացությունները	**Իմանա՝** • սարկավագ, դպիր նվիրապետական աստիճանների մասին • կաթողիկոսի, եպիսկոպոսի, քահանայի, վարդապետի գործառույթները • հոգևորականներին ողջունելու ձևերը • Հայր մեր աղոթքը անգիր **Կարողանա՝** բացատրել կուսակրոն և ոչ կուսակրոն հոգևորականների տարբերությունները
Հայ առաքելական եկեղեցու վարչական կառույցը		
Իմանա՝ • Հայաստանի հանրապետության թեմերի քանակը • Հայոց եկեղեցու վարչական և հոգևոր գերագույն իշխանությունը • Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրը **Կարողանա՝** ▪ ներկայացնել իրենց բնակավայրի գտնվելու թեմը, առաջնորդանիստ կենտրոնը	**Իմանա՝** ՀՀ-ում գործող ութ թեմերը, • Հայոց եկեղեցու պատմականորեն ձևավորված կառույցները, **Կարողանա՝** • բացատրել Արարատյան թեմի՝ Հայրապետական անվանվելու պատճառը • թվարկել սփյուռքում գործող մի քանի թեմեր	**Իմանա՝** • թեմերի առաջնորդանիստ կենտրոնները և եկեղեցիների անունները • իրենց թեմի առաջնորդի անունը • Հայոց եկեղեցու պատմականորեն ձևավորված կառույցների հիմնադրման տարեթվերը և վայրերը **Կարողանա՝** քարտեզի վրա ցույց տալ ՀՀ-ի և Արցախի թեմերի տարածքները
Հայկական եկեղեցիների ճարտարապետական կառուցվածքը		
Իմանա՝ Հայոց առաջին եկեղեցիների հիմնադրման ժամանակաշրջանը **Կարողանա՝** նկարագրել իրենց բնակավայրի եկեղեցու արտաքին կառուցվածքը	**Իմանա՝** • Հայկական եկեղեցիների արտաքին կառուցվածքը • եկեղեցում պատարագի Սուրբ սեղանի և մկրտության ավազանի գտնվելու վայրը **Կարողանա՝** բացատրել հիմնօրինեք և վանք հասկացությունները	**Իմանա՝** • Հայկական եկեղեցիների ներքին կառուցվածքը **Կարողանա՝** • նկարագրել իրենց բնակավայրի եկեղեցու ներքին կառուցվածքը և համեմատել հայկական եկեղեցու հատակագծի հետ • բացատրել եկեղեցու դերը հայ մարդու համար

ԹԵՄԱ 3. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ		
Իմանա՝ • Հայոց եկեղեցու խորհուրդները • յուրաքանչյուր խորհուրդի նպատակը • մկրտության և դրոշմի խորհուրդների միասնական անվանումը • հաղորդության խորհուրդը որպես պատարագի հիմնական առանցք լինելու մասին **Կարողանա՝** • բացատրել և հիմնավորել մկրտության խորհրդի որպես առանցքային խորհուրդ նշանակությունը	**Իմանա՝** • պարտադիր և կամավոր խորհուրդները • յուրաքանչյուր խորհրդի կատարման ընթացքը, վայրը, կրկնելիության հնարավորությունը, **Կարողանա՝** • բացատրել խորհուրդ, ձեռնադրություն, նարոտ, կնունք, կնքահայր, դրոշմ, մյուռոն, ապաշխարություն, մեղք, զղջում, խոստովանություն, քավություն, թողություն, նշխար, բաղարջ, անապակ, հայ քրիստոնյա, պսակադրության ուխտ, հասկացությունները և արտահայտությունները • վերլուծել գործած մեղքերը խոստովանելու անհրաժեշտությունը	**Իմանա՝** • խորհուրդների հիմնական իմաստը, • դրոշմի խորհրդի ժամանակ մյուռոնով դրոշմվող մարմնի մասերը • յուրաքանչյուր խորհրդի կատարման համար անհրաժեշտ պայմանները և խորհրդանիշները /իրերը/ **Կարողանա՝** • խաչակնքել և բացատրել խաչակնքման նպատակը • բացատրել մանուկների մկրտության պատճառները • գնահատել խորհուրդների դերը և հիմնավորել խորհուրդներին մասնակից լինելու կարևորությունը
ԹԵՄԱ 4. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ		
Իմանա՝ • ինչ է տոնը • պետական և եկեղեցական մի քանի կարևոր տոներ **Կարողանա՝** • բացատրել շարժական և անշարժ տոների տարբերությունները	**Իմանա՝** • Հայոց եկեղեցու տոների հիմնական խմբերը **Կարողանա՝** • բացատրել տաղավար տոն, տերունական տոն, պահքի օրեր, սուրբ, տոնացույց, բառերն ու արտահայտությունները	**Իմանա՝** տաղավար հինգ տոները **Կարողանա՝** • թվարկել տերունական և սրբերին նվիրված տոներ

Իմանա՝ • տոնի անվանումը, անվան բացատրությունը • տոնի շարժական կամ անշարժ լինելը • տոնի հետ կապված անձին /անձանց/, իրադարձությունը /իրադարձությունները/ **Կարողանա՝** • բացատրել տոնի որևէ խմբին պատկանելու հանգամանքները	**Իմանա՝** • յուրաքնչյուր տոնի հետ կապված ազգային- ժողովրդական սովորությունը • տոները, որոնց նախորդ օրը մատուցվում է ճրագալույցի պատարագ, որոնցից հետո կատարվում է տնօրհնեք • տոնը, որի օրը կատարվում է ջրօրհնեքի արարողություն • Ս. Ծննդյան և Ս. Հարության տոներին միմյանց ողջունելու ձևերը **Կարողանա՝** • բացատրել ճրագալույց, ջրօրհնեք, Աստվածահայտնություն, Տյառնընդառաջ, Բարեկենդան, Մեծ պահք, Ծաղկազարդ, վիճակ գցել, վիճակի երգեր, վարդավառ, խաղողօրհնեք, ճռաքաղ, փառաբանել, Սուրբ մասունք, նավակատիք, շարական, Խաչվերաց, Սուրբ թարգմանիչներ հասկացություններն ու արտահայտությունները • բացատրել Ս. Ծննդյան և Ս. Հարություն տոների ամենակարևոր տոներ լինելու պատճառները	**Իմանա՝** • յուրաքանչյուր տոնի տոնակատարության օրը, հաստատման ժամանակը • յուրաքանչյուր տոնի իմաստը **Կարողանա՝** • գնահատել տոների նշանակությունը հայ մարդու կյանքում • հավաքել և ներկայացնել տեղեկատվություն յուրաքանչյուր տոնի իրենց բնակավայրում գոյություն ունեցած ազգային-ժողովրդական սովորությունների, կերակրատեսակների և ավանդույթների վերաբերյալ

7-րդ դասարան

ԹԵՄԱ Ի. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Ի-ԻԻԻ ԴԱՐԵՐՈՒՄ		
Հին հայոց նախաքրիստոնեական հավատալիքները		
Ա մակարդակ	**Բ մակարդակ**	**Գ մակարդակ**
Իմանա՝ • հեթանոս հայերի կողմից պաշտվող բնության երևույթները • բարի և չար ոգիների մասին • հեթանոս հայերի կարծիքով աշխարհի բաղկացուցիչ մասերը • հայոց հեթանոսական դիցարանի մի քանի աստվածների անուններ **Կարողանա՝** • թվարկել հեթանոսական պաշտամունքի կենտրոնները Հայկական լեռնաշխարհում	**Իմանա՝** • բարի և չար ոգիների անունները • աշխարհաստեղծման հայոց առասպելը • հեթանոսական դարաշրջանի առասպելների անունները **Կարողանա՝** • բացատրել դիվահար, Շահապետ վայրաց, Բախտ, տոտեմիզմ, Անդունդ, հեթանոսություն, Միհերի դուռ անուններն ու հասկացությունները • համեմատել Արամազդի տաճարը Դելփյան տաճարի հետ • բացատրել Ամանոր և Վանատուր աստվածների դերը հայ իրականության մեջ	**Իմանա՝** • Աշտիշատի տաճարի տեղում հետագայում կառուցված Ս. Կարապետ վանքի մասին • իմանա Վանի թագավորության գլխավոր աստվածների անունները **Կարողանա՝** • մեկնաբանել հայոց հեթանոսական առասպենելների առանձնահատկությունները • բացատրել Իշպուինի արքայի կողմից ժայռի վրա նվաճված ժողովուրդների աստվածների անունները փորագրման պատճառները
Քրիստոնեության տարածման պատմական պայմանները		
Իմանա՝ Հռոմեական կայսրությունում Ի դարում առաջացած նոր գաղափարախոսության և նրա հիմնադրի մասին **Կարողանա՝** բացատրել հռոմեական կայսրերի՝ քրիստոնյաների դեմ պայքարելու պատճառները	**Իմանա՝** • այն երկրների անունները, որտեղ հիմնադրվեցին քրիստոնեական առաջին համայնքները **Կարողանա՝** • բացատրել քրիստոնյա առաջին համայնքերի անդամներին միավորող հանգամանքները • բացատրել կուռք, քարոզչություն, առաքյալ, քրիստոնեական համայնք բառերն ու հասկացությունները	**Իմանա՝** քրիստոնյա համայնքներին հալածող հռոեական կայսրերի անունները **Կարողանա՝** • քրիստոնեության արագ տարածման և հզորացման պատճառները

Քրիստոնեության մուտքը Հայաստան: Հայոց առաջին լուսավորիչները Հայոց նվիրական սրբությունները		
Իմանա՝ • Քրիստոնեությունը Հայաստանում առաջինը քարոզած առաքյալների անունները • առաքյալների գործունեության կենտրոնները **Կարողանա՝** բացատրել Հայոց եկեղեցու՝ Առաքելական անվանումը	**Իմանա՝** • Եդեսիայում գահակալող Աբգար թագավորի մասին • Հայաստանում Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների հանդիպման վայրը • Սանատրուկ արքայի վերաբերմունքը առաքյալների և նրանց հետևորդների նկատմամբ • Առաքյալների կողմից Հայաստան բերված նվիրական սրբությունները **Կարողանա՝** • վերլուծել Սանատրուկ արքայի գործունեության պատճառները • բացատրել Առաքելական եկեղեցի, Սրբազան ավանդություն, Աթոռ Թադեի արտահայտությունները	**Իմանա՝** • Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների Ավետարանում հիշատակված անունները • առաքյալների նահատակության վայրերում կառուցված եկեղեցիների անունները • առաքյալների կողմից Հայաստան բերված նվիրական սրբությունների վերաբերյալ սրբազան ավանդազրույցները **Կարողանա՝** • համակարգված ներկայացնել և մեկնաբանել Հայաստանում առաքյալների գործունեությունը և դրա արդյունքները
Քրիստոնեության տարածումը Հայաստանում I-III դարերում		
Իմանա՝ • առաքյալների կողմից եպիսկոպոսական աթոռներ հիմնադրելու գավառների անվանումները **Կարողանա՝** • բացատրել եպիսկոպոսների դերը համայնքներում և ներկայացնել նրանց գործունեությունը	**Իմանա՝** 1-3-րդ դարերում Մեծ Հայքում և Փոքր Հայքում գործող քրիստոնեական համայնքների մասին **Կարողանա՝** • ներկայացնել I-III դդ. քրիստոնյաների հանդեպ Հայաստանի և հարևան երկրների իշխանությունների վերաբերմունքի պատճառները • բացատրել ճգնավոր, մարտիրոս, նահատակ հասկացությունները	**Իմանա՝** Ոսկյանց և Սուքիասյանց գործունեության և նահատակության մասին **Կարողանա՝** • բացատրել ճգնավորների՝ անմարդաբնակ վայրեր հեռանալու պատճառները

ԹԵՄԱ II. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ		
Քրիստոնեության հռչակումը՝ որպես պետական կրոն **Գրիգոր Լուսավորիչը՝ որպես Հայոց առաջին հայրապետ**		
Իմանա՝ • Պարսկաստանում տեղի ունեցած հեղաշրջումը • Գրիգորի՝ Խոր վիրապ նետվելու մասին • քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու տարեթիվը և այդ ժամանակ իշխող արքայատոհմը • Հայոց հոգևոր կենտրոնը • Մայր տաճարի նավակատիքի տարեթիվը և օրը **Կարողանա՝** • վերլուծել Տրդատի հիվանդանալու պատճառները • բացատրել Էջմիածին անվան ստուգաբանությունը	**Իմանա՝** • քրիստոնեության պետական կրոն հռչակելու հետ կապված կարևոր իրադարձությունները և սրբազան ավանդությունը • Ագաթանգեղոս պատմիչի նասին • Գրիգոր Լուսավորչի տեսիլքը **Կարողանա՝** • բացատրել դարձի բերել, վկայարան, տեսիլք, Սուրբ սեղան, սրբերի մասունքներ բառերն ու հասկացությունները • ներկայացնել քրիստոնեության հաստատման ընթացքը Հայաստանում, • վերլուծել Գրիգոր Լուսավորչի Կեսարիայում եպիսկոպոս, իսկ Աշտիշատում՝ կաթողիկոս ձեռնադրվելու պատճառները	**Իմանա՝** • Վաղարշապատում 7-րդ դարում կառուցված վկայարանները • քրիստոնեության ընդունման անհրաժեշտության հետ կապված պատմական դեպքերն ու երևույթները • Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնադրված եկեղեցիները • Տրդատ արքայի մկրտության տարեթիվը և վայրը **Կարողանա՝** • մեկնաբանել Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու անհրաժեշտությունը, • բացատրել հայոց դարձի պատմական նշանակությունը:
ԹԵՄԱ III. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ		
Հայոց եկեղեցու կառույցի ձևավորումը		
Իմանա՝ • նորաբաց դպրոցներում դասավանդողների, դասավանդվող առարկաների մասին • Գրիգոր Լուսավորչի կողմից Մեծ Հայքում հաստատած եպիսկոպոսությունների քանակը, • Գր. Լուսավորչի գործունության շնորհիվ քրիստոնեություն ընդունած երկրները • Գր. Լուսավորչի կյանքի վերջին տարիների մասին **Կարողանա՝** բացատրել դպրոցների ստեղծման նպատակը	**Իմանա՝** • Հայոց եկեղեցու նվիրապետական կարգի ձևավորման մասին **Կարողանա՝** • մեկնաբանել Հայոց եկեղեցու նվիրապետության՝ պետական վարչական կառուցվածքին համապատասխան, ձևավորման պատճառները	**Իմանա՝** • Միլանի հրովարտակի մասին • 313թ. Մաքսիմիանոս Դայա կայսեր՝ հայերի դեմ մղած պատերազմի մասին • Գր. Լուսավորչի թողած գրական ժառանգության մասին **Կարողանա՝** • գնահատել կայսեր դեմ հայերի տարած հաղթանակը • համեմատել Միլանի 313թ. և Կոստանդիանոս կայսեր 324թ. հրովարտակները

Հայոց եկեղեցին Գրիգոր Լուսավորչի հաջորդների օրոք		
Իմանա՝ • Գր. Լուսավորչի հաջորդների անունները • Նիկեայի ժողովին Արիստակեսի մասնակցության մասին **Կարողանա՝** բացատրել <<Հոգևոր սուր>>, աշխարհիկ կյանք, զորավիգ լինել արտահայտությունները	**Իմանա՝** Փավստոս Բուզանդի խոսքերը Վրթանեսի հայրապետության տարիների մասին **Կարողանա՝** • վերլուծել եկեղեցի-պետություն հարաբերությունները Վրթանես կաթողիկոսի օրոք:	**Իմանա՝** Արիստակես, Վրթանես, Հուսիկ կաթողիկոսների և Գրիգոր եպիսկոպոսի գործունեությունների մանրամասները **Կարողանա՝** • համեմատել Արիստակես, Հուսիկ կաթողիկոսների և Աղվանքի եպիսկոպոս Գրիգորիսի գործունությունը և վերլուծել նրանց սպանության պատճառները
Պետություն-եկեղեցի հարաբերությունները IV դարի երկրորդ կեսին: Ներսես Մեծ: Աշտիշատի ժողովը: Հայոց եկեղեցու ազգայնացումը:		
Իմանա՝ • Ներսես Մեծի կաթողիկոս ձեռնադրվելու հանգամանքների մասին • Հայոց առաջին ազգային-եկեղեցական ժողովի հրավիրման վայրի և տարեթվի մասին • Ձիրավի ճակատամարտի և Պապ թագավորի բարեփոխումների մասին **Կարողանա՝** մեկնաբանել Պապ թագավորի բարեփոխումների պատճառները	**Իմանա՝** • Աշտիշատի ժողովի ժամանակ ընդունված որոշումները, • հանցանքները, որոնց համար պատիժներ սահմանվեցին • շարժումը, որը ժողովը որոշեց հովանավորել **Կարողանա՝** • մեկնաբանել սոցիալական խնդիրների հանդեպ Հայոց եկեղեցու ուշադրության պատճառները • գնահատել Աշտիշատի ժողովի պատմական նշանակությունը	**Իմանա՝** • Արշակ 2-րդի և Ներսես Մեծի փոխհարաբերությունների վատթարացման պատճառները • Պապ թագավորի բարեփոխումների և պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների վրա դրանց ազդեցության մասին **Կարողանա՝** • գնահատել Ներսես Մեծի գործունեությունը • գնահատել՝ Հայաստանում կաթողիկոսների ձեռնադրման նոր կարգի վերաբերյալ, Պապ թագավորի կողմից ընդունված որոշումը

Հայոց եկեղեցին Գրիգոր Լուսավորչի հաջորդների օրոք		
Իմանա՝ • Գր. Լուսավորչի հաջորդների անունները • Նիկեայի ժողովին Արիստակեսի մասնակցության մասին **Կարողանա՝** բացատրել <<Հոգևոր սուր>>, աշխարհիկ կյանք, զորավիգ լինել արտահայտությունները	**Իմանա՝** Փավստոս Բուզանդի խոսքերը Վրթանեսի հայրապետության տարիների մասին **Կարողանա՝** • վերլուծել եկեղեցի-պետություն հարաբերությունները Վրթանես կաթողիկոսի օրոք:	**Իմանա՝** Արիստակես, Վրթանես, Հուսիկ կաթողիկոսների և Գրիգոր եպիսկոպոսի գործունեությունների մանրամասները **Կարողանա՝** • համեմատել Արիստակես, Հուսիկ կաթողիկոսների և Աղվանքի եպիսկոպոս Գրիգորիսի գործունությունը և վերլուծել նրանց սպանության պատճառները
Պետություն-եկեղեցի հարաբերությունները IV դարի երկրորդ կեսին: Ներսես Մեծ: Աշտիշատի ժողովը: Հայոց եկեղեցու ազգայնացումը:		
Իմանա՝ • Ներսես Մեծի կաթողիկոս ձեռնադրվելու հանգամանքների մասին • Հայոց առաջին ազգային-եկեղեցական ժողովի հրավիրման վայրի և տարեթվի մասին • Ձիրավի ճակատամարտի և Պապ թագավորի բարեփոխումների մասին **Կարողանա՝** մեկնաբանել Պապ թագավորի բարեփոխումների պատճառները	**Իմանա՝** • Աշտիշատի ժողովի ժամանակ ընդունված որոշումները, • հանցանքները, որոնց համար պատիժներ սահմանվեցին • շարժումը, որը ժողովը որոշեց հովանավորել **Կարողանա՝** • մեկնաբանել սոցիալական խնդիրների հանդեպ Հայոց եկեղեցու ուշադրության պատճառները • գնահատել Աշտիշատի ժողովի պատմական նշանակությունը	**Իմանա՝** • Արշակ 2-րդի և Ներսես Մեծի փոխհարաբերությունների վատթարացման պատճառները • Պապ թագավորի բարեփոխումների և պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների վրա դրանց ազդեցության մասին **Կարողանա՝** • գնահատել Ներսես Մեծի գործունեությունը • գնահատել՝ Հայաստանում կաթողիկոսների ձեռնադրման նոր կարգի վերաբերյալ, Պապ թագավորի կողմից ընդունված որոշումը

Հայոց եկեղեցու ամրապնդումը: Սահակ Պարթև: Մեսրոպ Մաշտոց		
Իմանա՝ • Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մասին կենսագրական տեղեկություններ • Վռամշապուհ արքայի գործունեության մասին • Հայոց գրերի ստեղծման վայրը, տարեթիվը, հայերեն թարգմանված առաջին նախադասությունը, Աստվածաշնչի հայերեն թարգմանության անվանումը • Սուրբ Թարգմանչաց տոնի օրը **Կարողանա՝** • բացատրել պարսից արքայի կողմից Սահակ Պարթևին՝ կաթողիկոսությունից զրկելու և աքսորելու պատճառները • բացատրել Մաշտոցի և Սահակ Պարթևի մտահոգությունը՝ աղվան և վրաց ժողովուրդների գիր ունենալու համար	**Իմանա՝** • Հայոց գրերի ստեղծման նախադրյալները • գրերի գյուտից հետո ձեռնարկված գործողությունները **Կարողանա՝** • բացատրել ազգային ինքնագիտակցություն, համազգային կրոն, արտահայտությունները • գնահատել հայոց գրերի գյուտի նշանակությունը	**Իմանա՝** • Սահակ Պարթև կաթողիկոսի գործունեության հետ կապված կարևորագույն իրադարձությունները • Սահակ Պարթևի գրական, մշակութային ժառանգության մասին **Կարողանա՝** • գնահատել Սահակ Պարթևի ազգանվեր գործունեությունը • համեմատել Տրդատ Մեծ-Գր. Լուսավորիչ և Վռամշապուհ-Սահակ Պարթև համագործակցությունը
Տիեզերական ժողովները		
Իմանա՝ • առաջին երեք տիեզերական ժողովների գումարման վայրերը և տարեթվերը • բնագրի անվանումը, որի մեջ ամբողջացան առաջին երեք տիեզերական ժողովների որոշումները **Կարողանա՝** • բացատրել առաջին տիեզերաժողովների գումարման պատճառները	**Իմանա՝** • Նիկեայի, Կ.Պոլսի և Եփեսոսի տիեզերաժողովների հրավիրման պատճառները, • Արիոսի, Մակեդոնի և Նեստորի առաջ քաշած ուսմունքները Կարողանա՝ • բացատրել աղանդ, աղանդավորություն, հերետիկոսություն, տիեզերական ժողով հասկացությունները	**Իմանա՝** Հավատո հանգանակը **Կարողանա՝** ներկայացնել առաջին երեք ժողովների ժամանակ ընդունված որոշումները

ԹԵՄԱ IV ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ V-IX ԴԱՐԵՐՈՒՄ		
Հայոց եկեղեցին հավատի և հայրենիքի պաշտպան		
Իմանա՝ • Շահապիվանի ժողովը նախաձեռնող կաթողի-կոսի և գումարման վայրի մասին • Հազկերտ 2-րդի կրոնափոխության առաջարկի, Աշտիշատի ժողովի, նախարարների կեղծուրացու-թյան, Ավարայրի ճակատամարտի մասին • Վահանանց պատերազմների ժամանակը, ղեկա-վարներին: **Կարողանա՝** • Վարդանանց և Վահանանց պատերազմների դեպքերը ներկայացնել ժամանակագրական հա-ջորդականությամբ	**Իմանա՝** • Շահապիվանի ժողովում քննարկված հարցերի մասին • Վարդանանց և Վահանանց ազատագրական շարժումների ժամանակ գահակալող Հայոց կա-թողիկոսների անունները • կարևոր ճակատամարտերը և դրանց արդյունք-ները **Կարողանա՝** • հիմնավորել Աշտիշատի ժողովի հրավիրման հրատապությունը • գնահատել նախարարների կեղծուրացության որոշումը	**Իմանալ՝** • Հայաստանի ազատագրության ուղղությամբ հայ գործիչների գործադրած ջանքերը, խնդրի լուծման նրանց տարբերակները, • թուրք-պարսկական տիրապետության պայման-ներում պահպանված հայկական մելիքությունները • XVI դարում և XVII դ. առաջին կեսին Հայաստանի ազատագրության խնդիրը բարձրաց-ած գործիչ-ներին: **Կարողանա՝** • բացատրել Վարդանանց և Վահանանց պատե-րազմների պատճառները • համեմատել ու գնահատել ազատագրական պայքարի ղեկավարների, կաթողիկոսների քայլե-րը, տարբեր ճակատամարտերը. գտնել նմանու-թյուններն ու տարբերությունները • գնահատել 450-451թթ. և 481-484թթ. հայոց ազատագրական պատերազմների արդյունքները և պատմական նշանակությունը • գնահատել Հայոց եկեղեցու դերը V դարի ազա-տագրական շարժումների կազմակերպման գոր-ծում

Քաղկեդոնի ժողովը, ընդհանրական եկեղեցու բաժանումը և Հայոց եկեղեցին:		
Իմանա՝ • Քաղկեդոնի, Դվինի 1-ին և 2-րդ ժողովների գումարման տարեթվերը • Քաղկեդոնի ժողովի որոշումների հանդեպ Հայոց եկեղեցու վերաբերմունքի մասին **Կարողանա՝** • բացատրել Հայոց եկեղեցու՝ Քաղկեդոնի ժողովին չմասնակցելու պատճառները	**Իմանա՝** • Քաղկեդոնի ժողովի հրավիրման պատճառների, Եվտիքեսի և նրա քարոզների մասին • Դվինի 1-ին և 2-րդ ժողովների ընդունած որոշումների մասին **Կարողանա՝** • բացատրել երկաբնակ, միաբնակ, միաբնակ-ուղղափառ հասկացությունները	**Իմանա՝** • Քաղկեդոնի ժողովի ընդունված բանաձևը • Հայաստանում նեստորականների հիմնավորվելու մասին • Դվինի 1-ին և 2-րդ ժողովները հրավիրած կաթողիկոսների անունները **Կարողանա՝** • վերլուծել քաղկեդոնականության նկատմամբ Հայոց եկեղեցու դիրքորոշման պատճառները և գնահատել դրա պատմական նշանակությունը • համեմատել Դվինի 1-ին և 2-րդ եկեղեցական ժողովների որոշումները:
Հայոց եկեղեցու փոխհարաբերությունները Վրաց ու Աղվանից եկեղեցիների հետ V-VII դարերում		
Իմանա՝ • Վրաց եկեղեցու առանձնացման դարաշրջանը • Աղվանքում քրիստոնեության տարածման և գրերի ստեղծման պատմությունը • Վաչագան թագավորի մասին **Կարողանա՝** • ներկայացնել Վաչագան Բարեպաշտ արքայի գործունության ուղղությունները	**Իմանա՝** • Վաչագան Բարեպաշտի օրոք կառուցված եկեղեցիների թիվը, նրա վերաբերմունքը դպրոցների նկատմամբ • Աղվենի ժողովի և նրա ընդունած որոշումների մասին **Կարողանա՝** • բացատրել Աղվենի ժողովի ընդունած կանոնների հիմնական նպատակը • գնահատել Վաչագան Բարեպաշտ արքայի գործունեությունը	**Իմանա՝** • Աղվանից կաթողիկոսության հիմնադրման և վերացման ժամանակաշրջանները • առաջին կաթողիկոսի և նրա օրոք սահմանված կարևոր կարգի մասին: **Կարողանա՝** • համեմատել Աղվենի ժողովի ընդունած որոշումները Աշտիշատի և Շահապիվանի ժողովների որոշումների հետ

Պայքար ազգային-հոգևոր միասնության պահպանման համար:		
Իմանա՝ • Միջնադարում Հայաստանում գործած աղանդավորական շարժումների անունները • Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի մասին **Կարողանա՝** • նշել պավլիկյանների և թոնդրակյանների որոշ գաղափարներ	**Իմանա՝** • Պավլիկյան և Թոնդրակյան աղանդավորական շարժումների առաջացման վայրերը, ժամանակաշրջանները, կենտրոնատեղիները • Դվինի 719թ. եկեղեցական ժողովի մասին **Կարողանա՝** • բացատրել աղանդավոր հասկացությունն ու սատանայի որդիներ արտահայտությունը • ներկայացնել և բացատրել Դվինի 719թ. եկեղեցական ժողովի որոշումները	**Իմանա՝** • Պավլիկյան և Թոնդրակյան աղանդավորական շարժումների դեմ պայքարած գործիչների անունները • <<Ընդդեմ պավլիկյանների>> ճառի հեղինակի անունը և նրա բովանդակությունը **Կարողանա՝** • ներկայացնել և համեմատել պավլիկյանների ու թոնդրակյանների գաղափարները, գտնել նմանությունները և տարբերությունները • բացատրել արաբական իշխանությունների խրախուսական վերաբերմունքի պատճառները պավլիկյանների հանդեպ • վերլուծել աղանդավորական շարժումների (պավլիկյաններ, թոնդրակյաններ) վտանգը ազգային միասնության համար

8-րդ դասարան

ԹԵՄԱ Ի. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ		
Հայոց եկեղեցու դերը անկախ թագավորության վերականգնման և ամրապնդման գործում		
Ա մակարդակ	**Բ մակարդակ**	**Գ մակարդակ**
Իմանա՝ • Զաքարիա Զագեցու ընտրության հանգամանքների մասին • Սևանի կղզում IX դ. կառուցված եկեղեցիների անունները • Հովհաննես Դրասխանակերտցու պատմական աշխատության անվանումը • Սուրբ Խաչ եկեղեցու կառուցման վայրը, տարեթիվը, ճարտարապետի և պատվիրատուի անունները **Կարողանա՝** • բնութագրել Զաքարիա Զագեցուն • բնութագրել Հովհաննես Դրասխանակերտցուն	**Իմանա՝** • Աշոտ իշխանին թագավոր հռչակելու ուղղությամբ Զաքարիա Զագեցու կատարած քայլերը • Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի ընտրության և գործունեության կարևոր դրվագները • Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսի թողած ծիսական ժողովածուի անվանումը • Հովհաննես Դրասխանակերտցու գործունեության կարևոր դրվագները **Կարողանա՝** • բացատրել <<խոստովանող>> հասկացությունը • բացատրել աշխարհական Զաքարիա Զագեցու կաթողիկոս ընտրվելու հանգամանքները	**Իմանա՝** • Փոտ պատրիարքի պահանջի, 862թ. Շիրակավանում գումարված ժողովի և նրա ընդունած որոշման մասին • Գևորգ Բ Գառնեցու օրինությամբ թագադրված հայոց թագավորներին Կարողանա՝ • գնահատել Փոտ պատրիարքի՝ քաղկեդոնականություն ընդունելու պահանջը մերժելու հայերի քայլի կարևորությունը • վերլուծել կաթողիկոսական աթոռի՝ Աղթամարում հաստատվելու պատճառները
Հայոց եկեղեցին Բագրատունյաց թագավորության վերելքի ժամանակաշրջանում		
Իմանա՝ • Կաթողիկոսարանի Կարս տեղափոխման տարեթիվը, այդ ժամանակ գահակալող արքայի և կաթողիկոսի անունները **Կարողանա՝** • հիմնավորել կաթողիկոսական աթոռի Կարս տեղափոխման անհրաժեշտությունը	**Իմանա՝** • Սյունյաց մետրոպոլիտության վերականգնման, Սյունյաց և Աղվանից աթոռների անջատողական ձգտումների մասին • Խաչիկ Արշարունու գործունության կարևոր դրվագները **Կարողանա՝** • վերլուծելել Անանիա Մոկացու դիրքորոշումը՝ բռնությամբ քաղկեդոնականությունն ընդունած հայերի նկատմամբ	**Իմանա՝** • X դարում Գուգարքում, Շիրակում, Արշարունիքում կառուցված նշանավոր վանքերի անունները • Խաչիկ Արշարունու կողմից Կիլիկիայում հայկական եպիսկոպոսությունների հիմնադրման մասին փաստեր **Կարողանա՝** • վերլուծել Սյունյաց և Աղվանից աթոռների անջատողական ձգտումների դեմ Անանիա Մոկացի կաթողիկոսի ձեռնարկած քայլերի քաղաքական նշանակությունը
Հոգևոր և մշակութային վերելքը X դարում: Գրիգոր Նարեկացի		
Իմանա՝ ▪ Գրիգոր Նարեկացու կենսագրական կարևոր	**Իմանա՝** ▪ Նարեկավանքի դպրոցի գործունեության մասին	**Իմանա՝** ▪ <<Մատյան ողբերգության>> պոեմի բովան-

դրվագներ ▪ <<Մատյան ողբերգության>> պոեմի մասին **Կարողանա՝** ներկայացնել և մեկնաբանել Գր. Նարեկացու կյանքի մասին ավանդազրույցներ	**Կարողանա՝** բացատրել աղոթքի հոգևոր խորհուրդը	դակության և կառուցածքի մասին **Կարողանա՝** ▪ գնահատել <<Մատյան ողբերգության>> պոեմը որպես ազգային-հոգևոր մեծագույն արժեք
Մայրաքաղաք և կաթողիկոսանիստ Անիի ծաղկումը: Սարգիս Ա Սևանցի		
Իմանա՝ Անի մայրաքաղաքի նշանավոր եկեղեցիների և վանքերի անունները **Կարողանա՝** նկարագրել Անին	**Իմանա՝** ▪ Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսի գործունեության կարևոր դրվագները **Կարողանա՝** ▪ բացատրել Գագիկ 1-ին արքայի՝ կաթողիկոսական աթոռի դերի կարևորման պատճառները	**Իմանա՝** Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսի պատվերով գրված գործերը: **Կարողանա՝** ▪ ներկայացնել և համեմատել Անին որպես Հայաստանի հոգևոր և աշխարհիկ կենտրոն, գնահատել Անի մայրաքաղքի դերը հայոց պատմության մեջ ▪ նկարներով ճանաչել Անիի եկեղեցիները և վանքերը
Հայոց եկեղեցին Բագրատունյաց թագավորության անկման շրջանում **Հայոց եկեղեցու նկատմամբ գործադրված ճնշումներն ու հալածանքները Բագրատունյաց թագավորության անկումից հետո**		
Իմանա՝ ▪ 1022թ. կատարված ջրօրհնեքի ծեսի մասին ▪ Անիի թագավորության վերացման դրվագները **Կարողանա՝** ▪ բացատրել կաթողիկոսի՝ <<Գետադարձ>> մականվան ստանալու պատճառը ▪ բացատրել Անիի թագավորության կործանումից հետո Բյուզանդիայի՝ Հայոց եկեղեցու նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի պատճառները	▪ **Իմանա՝** ▪ Սարգիս Ա կաթողիկոսի կենդանության օրոք նոր կաթողիկոսի ձեռնադրության անհրաժեշտության մասին ▪ Խաչիկ Բ Անեցու գահակալման շրջանի մասին ▪ Ծամնդավի ժողովի մասին ▪ Բարսեղ Անեցի կաթողիկոսի գործունեության կարևոր դրվագները ▪ **Կարողանա՝** ▪ բացատրել բյուզանդացիների՝ Պետրոս Գետադարձ կաթողիկոսին Հայաստան վերադառնալ չթույլատրելու պատճառները ▪ բացատրել սելջուկյան արշավանքերի ժամանակ բյուզանդացիների՝ հայոց եկեղեցու նկատմամբ քաղաքականության նպատակները	▪ **Իմանա՝** ▪ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի կողմից ստեղծված եպիսկոպոսությունների անունները ▪ Բարսեղ Անեցի կաթողիկոսի ստացած տիտղոսը ▪ Հայրապետական աթոռների ստեղծման մասին ▪ **Կարողանա՝** ▪ մեկնաբանել Պետրոս Գետադարձի՝ Անանիա վրդպ. Սանահնեցուն տված պատվերի նպատակը ▪ վերլուծել Բյուզանդիայի՝ Հայաստանի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի հետևանքները ▪ վերլուծել հայրապետական աթոռների առաջացման վտանգը Հայոց եկեղեցու համար

ԹԵՄԱ II. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ		
Իմանա՝ ▪ Կիլիկայում Հայոց եկեղեցու կառույցների ձևավորման մասին ▪ հայ-հռոմեական եկեղեցական հարաբերությունների սկզբնավորման մասին ▪ Զաքարյան Հայաստանում կառուցված նշանավոր վանական համալիրները և ուսումնագիտական կենտրոնները ▪ Հայաստանում միարարական շարժման տարածման մասին **Կարողանա՝** ▪ բացատրել Մեծ Հայքից դուրս գտնվող հայ իշխանների՝ Հայոց եկեղեցուն աջակցելու պատճառները ▪ նշել միարարների նպատակները ▪ բացատրել Հայրապետական աթոռի՝ Հռոմկլեայից Սիս տեղափոխելու պատճառները ▪ բացատրել Կիլիկյան Հայաստանի՝ հույսը միայն Եվրոպայի հետ կապելու պատճառները	**Իմանա՝** ▪ 1113թ. Գրիգոր Պահլավունու ընտրության և Դավիթ Թոռնիկյան եպիսկոպոսի կողմից հակաթոռ կաթողիկոսության ստեղծման մասին ▪ Հայոց և բյուզանդական եկեղեցիների միավորման փորձերի, միավորման շուրջ առաջացած երկու ուղղությունների մասին ▪ Ներսես Շնորհալու գործունեությունը ▪ Հայաստանում եկեղեցու իրավունքները վերականգնելու ուղղությամբ Զաքարյանների կատարած քայլերը ▪ Ստեփանոս Օրբելյանի նախաձեռնությամբ Նորավանքում գումարած ժողովի և ընդունած որոշման մասին ▪ միարարական շարժման դեմ Հակոբ Բ Մանավարզեցի կաթողիկոսի ձեռնարկած գործողությունները, միարարների դեմ պայքարող ուսումնագիտական կենտրոնները ▪ Հայոց եկեղեցու և պապականության հարաբերությունների ու <<117 մուլություններ>> գրքույկի բովանդակության հիմնական դրույթները **Կարողանա՝** ▪ բացատրել հակաթոռ, բանադրել, դավանափոխություն, <<Միավորյալ մի բնություն>> արտահայտություններն ու հասկացությունները ▪ վերլուծել Աղթամարի Դավիթ Թոռնիկյան եպիսկոպոսի գործողությունների պատճառները ▪ վերլուծել XIIդ. կեսերին Հայոց և բյուզանդական եկեղեցիների միավորման շուրջ առաջացած երկու ուղղությունների գործողությունները	**Իմանա՝** ▪ 1114թ. Շուղրի Կարմիր վանքում գումարված ժողովի, կաթողիկոսի ընտրության նոր կարգի հաստատման և դրա նպատակի մասին ▪ Հայոց կաթողիկոսի ընտրությունը հաստատող չորս արքեպիսկոպոսությունների անվանումները, ▪ Հայոց կաթողիկոսի և Կիլիկյան արքունիքի միջև հաստատված հարաբերությունների մասին ▪ Հռոմկլեայի ժողովի հրավիրման տարեթիվը, պատճառները և ընդունած որոշումները ▪ Զաքարյան Հայաստանի ուսումնագիտական կենտրոններում գիտամանկավարժական գործունեություն ծավալող գործիչների անուններ ▪ Հայ-վրացական եկեղեցական հարաբերությունների սրման, 1203թ. և 1242թ. Սսում գումարված ժողովների և դրանց որոշումների մասին ▪ Սսի՝1307թ. և Ադանայի՝ 1317թ. ժողովները և Հայաստանում՝ դրանց արձագանքների, և 1361թ. Սսի ժողովում դրանք չեղյալ հայտարարելու մասին **Կարողանա՝** ▪ վերլուծել Բարսեղ Անեցու կողմից կաթողիկոսական աթոռը Հայաստանից դուրս տեղափոխելու քայլը ▪ բացատրել Հռոմկլեայի Հայոց կաթողիկոսների՝ <<Ամենայն Հայոց կաթողիկոս>> տիտղոսը ընդունելու պատճառները ▪ գնահատել Հայոց եկեղեցու ունեցած դերը Կիլիկիայում Հայոց պետականության ստեղծման գործում ▪ վերլուծել դավանափոխության՝ կրոնական, ազգային և քաղաքական վտանգները հայերի համար

		▪ գնահատել Հայոց եկեղեցու դերը Կիլիկիայում պետականության անկումից հետո
ԹԵՄԱ III. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ		
Իմանա՝ ▪ կաթողիկոսական աթոռի Հայաստան տեղափոխման շարժումը գլխավորող գործիչների և ուսումնագիտական կենտրոնների անունները ▪ Ազգային-եկեղեցական ժողովի գումարման տարեթիվը և ընտրված կաթողիկոսի անունը ▪ Աղթամարի Զաքարիա կաթողիկոսի գործունեության և Սմբատ Արծրունու՝ Հայոց թագավոր օծվելու մասին ▪ հայկական տպագրության հիմնադրման տարեթիվը, վայրը, հիմնադրի անունը ▪ հայ տպագրության առաջնեկի անունը և նրա բովանդակությունը ▪ Մխիթարյան միաբանության հիմնադրի անունը, հիմնադրման տարեթիվը և վայրը ▪ Հայոց եկեղեցու և Նադիր շահի հարաբերությունների մասին ▪ հայերեն առաջին պարբերականի անվանումը, հրատարակման վայրը, տարեթիվը, հրատարակչին **Կարողանա՝** ▪ թվարկել IV-XV դդ. առաջացած Հայոց կաթողիկոսությանը ենթակա կառույցների և ներկայումս գործող նվիրապետական աթոռների անունները ▪ բնութագրել Աղթամարի Զաքարիա կաթողիկոսն և գնահատել նրա գործունեությունը ▪ բացատրել Նադիր շահի՝ Հայոց եկեղեցու և հայերի հանդեպ ունեցած վերաբերմունքի պատճառները	**Իմանա՝** ▪ 1375թ. հետո Կիլիկիայում Հայոց կաթողիկոսության վիճակի մասին ▪ 1441թ. Ազգային-եկեղեցական ժողովի ընթացքի, առաջարկված թեկնածուների, Կիրակոս Ա Վիրապեցու ընտրության և օծման մասին ▪ Նվիրապետական աթոռների ծավալած գործունեության հիմնական դրվագները ▪ Էջմիածնի՝ 1547թ., Սեբաստիայի՝ 1562թ., Էջմիածնի՝ 1677թ. հրավիրված ժողովները և նրանց ընդունած որոշումները ▪ Մովսես Տաթևացու իրականացրած կարևոր ձեռնարկները ▪ Մխիթարյան միաբանության գործունեության առանձնահատկությունները, ▪ Մխիթարյանների երկրորդ միաբանության հաստատման վայրը և տարեթիվը ▪ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի իրականացրած կարևոր ձեռնարկները **Կարողանա՝** ▪ բացատրել Գրիգոր Մուսաբեկյանի՝ Վաղարշապատ տեղափոխվելու առաջարկի մերժման պատճառները ▪ բացատրել Հայոց կաթողիկոսությանը ենթակա յուրաքանչյուր կառույցի ստեղծման պատմական պայմանները ▪ բացատրել <<մետրոպոլիտություն>>, <<եպիսկոպոսություն>> հասկացությունները ▪ գնահատել Մովսես Տաթևացու գործունությունը	**Իմանա՝** ▪ Ստեփանոս Օրբելյանի պոեմի անվանումը և բովանդակությունը ▪ Հայոց կաթողիկոսությանը ենթակա բոլոր կառույցների ստեղծման վայրերը, հիմնադրման և գործունեության դադարեցման տարեթվերը, առաջնորդանիստերը, առաջին առաջնորդների անունները ▪ Հակոբ Մեղապարտի և Աբգար դպիրի գործունեության կարևոր դրվագները ▪ Մխիթար Սեբաստացու նշանավոր հետնորդների անունները և Մխիթարյանների գրական ժառանգության նշանավոր գործերը ▪ XVIII դ գահակալած կաթողիկոսների անունները ըստ ժամանակագրության **Կարողանա՝** ▪ հիմնավորել կաթողիկոսական աթոռի Հայաստան տեղափոխելու անհրաժեշտությունը ▪ գնահատել Էջմիածին տեղափոխված Մայր Աթոռի դերը հայապահպանության գործում ▪ մեկնաբանել նվիրապետական աթոռների և Ամենայն Հայոց կաթողիկոսության հարաբերությունները ▪ վերլուծել XVդ Հայոց եկեղեցու կողմից ազատագրական պայքարի նախաձեռնությունն ու ղեկավարությունն ստանձնելու պատճառները ▪ համեմատել Ստեփանոս Սալմաստեցի, Միքայել Սեբաստացի և Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսների գործունեությունները

	▪ բացատրել XVI-XVII դդ հայերի շրջանում կաթոլի-կության տարածման պատճառները ▪ գնահատել Գանձասարի կաթողիոս Եսայի Հասան Ջալալյանի դերը Արցախի ազատամարտերում ▪ բացատրել Սիմեոն Երևանցի կաթողիկոսի՝ տվյալ ժամանակաշրջանի ազատագրական շարժման գործիչների հանդեպ ունեցած վերաբերմունքի պատճառները	▪ մեկնաբանել Մխիթարյանների <<ազգը չզոհել կրոնին և կրոնը ազգությանը>> հավատամքի իմաստը, արտահայտել սեփական վերաբերմունք ▪ համեմատել Սիմեոն Երևանցի և Աբրահամ Կրե-տացի կաթողիկոսների գործունեությունները

9-րդ դասարան

ԹԵՄԱ Ի. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՎ 1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ		
Ա մակարդակ	**Բ մակարդակ**	**Գ մակարդակ**
Իմանա՝ ▪ Սինոդի ստեղծման մասին ▪ XIX դարի սկզբին գործող Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները ▪ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին Ներսես Աշտարակեցու մասնակցության մասին ▪ 1836թ. եկեղեցական կանոնադրության և նրա անվանման մասին ▪ կաթոլիկ եկեղեցու՝ Կ. Պոլսի պատրիարքությունից առանձնանալու մասին ▪ բողոքական եկեղեցու առաջացման մասին ▪ Մատթեոս Ա Կոստանդնու-պոլսեցի կաթողիկոսի մասին **Կարողանա՝** ▪ բնութագրել Ներսես Աշտարակեցուն ▪ բացատրել եկեղեցական կանոնադրության <<Թիֆլիսյան>> տարբերակի չհաստատման պատճառները ▪ բացատրել կաթոլիկության և բողոքականության տարածման պատճառները	**Իմանա՝** ▪ XIX դ. սկզբին Հայոց եկեղեցու կողմից իրականացվող գործառույթները ▪ XIX դ. սկզբին Մայր Աթոռի և նվիրապետական աթոռների միջև հաստատված հարաբերությունների մասին ▪ 1830-ական թթ. Հայոց եկեղեցու վիճակի մասին ▪ եկեղեցական կանոնադրության բովանդակությունը, ▪ հայ ժողովրդի տարբեր հատվածների կողմից 1836թ. եկեղեցական կանոնադրության հանդեպ վերաբերմունքի մասին ▪ Հայոց եկեղեցուց հայ կաթոլիկ եկեղեցու առանձնացման պայմանները ▪ բողոքական եկեղեցու առաջացման պայմանները **Կարողանա՝** ▪ վերլուծել Սինոդի ստեղծման նշանակությունը Հայոց եկեղեցու համար ▪ բացատրել ցարական կառավարության կողմից Հայոց եկեղեցուն հատկացվող առանձնահատուկ վերաբերմունքի պատճառները ▪ բացատրել վեղար, մետրոպոլիտ, հասկացությունները ▪ բացատրել Ի.Պասկևիչի՝ Ներսես Աշտարակեցուն հալածելու պատճառները ▪ բացատրել թուրքական կառավարության կողմից բողոքական եկեղեցու ճանաչման պատճառները ▪ բացատրել սուլթանի՝ հայ կաթոլիկների անջատ-	**Իմանա՝** ▪ XIX դ. սկզբից մինչև XIX դ. 60 ական թթ. գահակալած հայոց կաթողիկոսներին, նրանց գահակալման տարիները ▪ հայ կաթոլիկ եկեղեցու նկրտումների մասին ▪ բողոքական եկեղեցու կենտրոնները, առաջին քարոզիչների անունները ▪ 1820-1860-ական թթ.Հայոց եկեղեցու գործունեության մասին **Կարողանա՝** ▪ գնահատել Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի գործունեությունը ▪ ներկայացնել և վերլուծել նվիրապետական աթոռների դերն ու նշանակությունը Հայոց եկեղեցու և հայ ժողովրդի համար ▪ վերլուծել ցարական կառավարության կողմից 1836թ. եկեղեցական կանոնադրության մշակման պատճառները ▪ գնահատել 1836թ. եկեղեցական կանոնադրության դերը Հայոց եկեղեցու համար ▪ վերլուծել բողոքական եկեղեցուց սպառնացող վտանգը հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու համար ▪ ներկայացնել և վերլուծել հայության մեջ կաթոլիկության և բողոքականության տարածման հետևանքները ▪ Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու Հայոց կաթողիկոս ընտրվելու պատճառները

	վելուն դեմ լինելու պատճառները	
ԹԵՄԱ II. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՅՔԱՐ ՌՈՒՍԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ - XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)		
Իմանա՝ • Տարրական դպրոցներում կրթության տևողությունը, դասավանդվող առարկաները • <<Արարատ>> հանդեսի հրատարակման վայրը, թվականը, հանդեսում արծարծվող հարցերը • Հայոց եկեղեցու կրթամշակութային գործունեությունը սահմանափակելու ուղղությամբ ցարական կառավարության ձեռնարկած քայլերը • ցարական կառավարության գաղութային քաղաքականության դեմ Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ սկսված պայքարի մասին • ցարական կառավարության կողմից հայկական դպրոցները փակելու թվականը **Կարողանա՝** • գնահատել <<Արարատ>> հանդեսի դերը հայ իրականության մեջ • բացատրել ռուսական կառավարության Հայոց եկեղեցուն թուլացնելու պատճառները • բացատրել հայոց պատմության և աշխարհագրության դասավանդման արգելման պատճառները	**Իմանա՝** • հոգևոր և վիճակային դպրոցների մասին • Արմաշի դպրեվանքի և հիմնադրման տարեթվի մասին • 1883թ. հայկական դպրոցների դեմ սկսված հալածանքների պատճառը • 1903թ. հունիսի 12-ի օրենքի մասին **Կարողանա՝** • բացատրել XIXդ.վերջին և XXդ. սկզբին օսմանյան և ռուսական իշխանությունների կողմից Հայոց եկեղեցու հալածանքների պատճառները • վերլուծել 1886թ. հայկական դպրոցները վերաբացելու ցարական կառավարության՝ թույլտվության պատճառները • ներկայացնել և մեկնաբանել Մկրտիչ Ա Խրիմյանի 1903թ. հունիսի 12-ի օրենքի իրականացումը կանխելու նպատակով ձեռնարկած քայլերը	**Իմանա՝** • Ստ. Փափազյանի կողմից մշակված ծրագրի համաձայն կրթական ոլորտում կատարված փոփոխությունները • Ալեքսանդր III ցարի 1891թ. հրամանի մասին • հայկական դպրոցների վերաբացման համար ծավալված պայքարի մանրամասները • Մկրտիչ Ա Խրիմյանի հայ-թաթարական ընդհարումները կանխելու համար կատարած քայլերը • Նիկոլայ I ցարի կողմից ստորագրված հրովարտակի օրն ու տարեթիվը **Կարողանա՝** • գնահատել Արմաշի դպրեվանքի դերը արևմտահայ իրականության մեջ • գնահատել հակացարական ազգային-ազատագրական պայքարի նշանակությունը • վերլուծել 1903թ. հունիսի 12-ի օրենքի նպատակը
ԹԵՄԱ III. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ		
Իմանա՝ ▪ Սան Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովների մասին, ▪ <<Երկաթե շերեփի>> խորհուրդը ▪ հոգևորական հայդուկների անուններ ▪ Մկրտիչ Խրիմյանի ազգանվեր գործունեության որոշ դրվագներ ▪ Մեծ եղեռնի տարիներին ոչնչացված եկեղեցի-	**Իմանա՝** ▪ Զեյթունի ինքնապաշտպանության, և Բարդուղիմեոս վարդապետի մասին ▪ 1880-1890-ական թթ. ջարդերից տուժածներին օգնություն կազմակերպելու ուղղությամբ Մկրտիչ Խրիմյանի գործողությունների մասին ▪ Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի՝ Պողոս Նուբարին տված լիազորությունների մասին	**Իմանա՝** ▪ 1890-ական թթ. հայոց ազատագրական շարժման ղեկավար հոգևորականների անունները ▪ Մկրտիչ Խրիմյանի և Նիկոլայ II հանդիպման ու դրա արդյունքների մասին ▪ Խանասորի արշավանքի մասին ▪ Ցեղասպանությունից փրկված հայերին օգնություն ապահովելու նպատակով Գևորգ Ե Սուրեն-

ների քանակը **Կարողանա՝** ▪ բնութագրել Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսին ▪ բնութագրել Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսին	▪ Հայոց եկեղեցուն Մեծ եղեռնի տարիներին հասցված վնասի մասին **Կարողանա՝** ▪ վերլուծել Մեծ տերությունների կողմից Բեռլինի վեհաժողովի հրավիրման պատճառները, ▪ բացատրել Մկրտիչ Խրիմյանի կողմից հայ գաղթականներին հայրենի բնակավայրեր վերադարձնելու և որբերին հայկական որբանոցներում հավաքելու խնդիրների կարևորությունը	յանց կաթողիկոսի ձեռնարկած գործողությունների մասին ▪ Մեծ եղեռնի տարիներին ոչնչացված նշանավոր որոշ կոթողների անուններ **Կարողանա՝** ▪ բացատրել Մ. Խրիմյանի հանձնարարությամբ հայ հոգևոր առաջնորդների մեծ տերություններին դիմելու նպատակները և ամփոփել դրա արդյունքները ▪ վերլուծել հայ հոգևորականությանը առաջին հերթին բնաջնջելու վերաբերյալ Թալեաթի խոսքերը
ԹԵՄԱ IV. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ		
Իմանա՝ ▪ Մայիսյան հերոսամարտերի նախօրյակին Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի ընդունած որոշման և ժողովրդին ուղղված կոչի մասին ▪ ՀՀ կառավարությանը Հայոց եկեղեցու հատկացրած ֆինանսական օգնության, ▪ բոլշևիկների գործողու-թյունների հանդեպ Հայոց եկեղեցու դիրքորոշման մասին **Կարողանա՝** ▪ գնահատել Գևորգ Ե Սուրենյանցի դիրքորոշումը մայիսյան հերոսամարտերի նախօրեին ▪ բացատրել Հայոց եկեղեցու՝ բոլշևիկների հանդեպ ունեցած դիրքորոշման պատճառները	**Իմանա՝** ▪ Գարեգին եպս. Հովսեփյանի մասին Ս. Վրացյանի գնահատականը ▪ Հայոց եկեղեցու 1918-1920թթ. գործունեության մասին **Կարողանա՝** ▪ գնահատել Գարեգին Ե Հովսեփյանի դերը Մայիսյան հերոսամարտերի կազմակերպման գործում ▪ թվարկել 1918-1920թթ. եկեղեցի-պետություն համագործակցության ուղղությունները	**Իմանա՝** ▪ ռազմաճակատ մեկնած և մայիսյան հերոսամարտերում աչքի ընկած հայ հոգևորականների անունները ▪ Եկեղեցի-պետություն դաշնագիրը և դրա չիրականացման պատճառը ▪ ներեկեղեցական կյանքի բարեկարգման ուղղությամբ ձեռնարկված քայլերը **Կարողանա՝** ▪ գնահատել Հայոց եկեղեցու դերը անկախ պետականության կառուցման գործում
ԹԵՄԱ V. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ		
Իմանա՝ ▪ 1920-ական թթ. սկզբից մինչև 1938թ. փակվող և քանդվող վանքերի, եկեղեցիների և հոգևորականների հալածաքների մասին ▪ Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի տոնակատարությունների մասին	**Իմանա՝** ▪ Հայոց 1920-ական թթ. սկզբին եկեղեցու գործունեության մասին ▪ 1921թ. Հայհեղկոմի ընդունած որոշման և դրա հետևանքների մասին ▪ 1932թ. բացված Ազգային-եկեղեցական ժողովի և	**Իմանա՝** ▪ 1920-ական թթ. սկզբին Հայոց եկեղեցուն թուլացնելու՝ բոլշևիկների քայլերը ▪ 1938թ. Հայաստանի ժողկոմխորհի ընդունած որոշումը ▪ Խորեն Մուրադբեկյանի՝ Ստալինի հետ հանդիպ-

▪ Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսի և նրա եղբայրների սպանության մասին ▪ 1945թ. հրավիրված Ազգային-կեղեցական ժողովի, Հայոց եկեղեցու նոր սահմանադրության և Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության մասին ▪ Վազգեն Ա կաթողիկոսի գահակալման տարեթվերը, ժողովրդի կողմից նրան տրված տիտղոսի, վերաբացված թեմերի, նրա օրոք Աստվածաշնչի աշխարհաբար ամբողջական թարգմանության, Անկախության մյուռոնի մասին **Կարողանա՝** ▪ բացատրել Աստվածաշնչի հայերեն թարգմանության տոնակատարությունը Սփյուռքում նշելու պատճառները ▪ բնութագրել Հայոց եկեղեցու վիճակը Հայրենական Մեծ պատերազմի նախօրյակին ▪ թվարկել երկրաշարժից տուժած և բռնագաղթի ենթարկված ժողովրդին աջակցելու համար Հայոց եկեղեցու ձեռնարկած քայլերը	նոր կաթողիկոսի ընտրության մասին ▪ Խորեն Ա Մուրադբեկյանի ծավալած գործողությունների մասին ▪ 1941թ. հրավիրված Ազգային-եկեղեցական ժողովի, քննարկած հարցերի և նրա ընդունած որոշման մասին ▪ Հայոց եկեղեցու և Գևորգ արքեպս. Չորեքչյանի՝ Հայրենական Մեծ պատերազմին ունեցած մասնակցության մասին ▪ Վազգեն Ա կաթողիկոսի եկեղեցաշինական գործունեության մասին, նորոգված վանքերի և եկեղեցիների անունները ▪ Վազգեն Ա-ի գահակալության տարիներին Մայր Աթոռի հրատարակչական-տպագրական գործունեության մասին **Կարողանա՝** ▪ բացատրել Ազգային-եկեղեցական ժողով գումարելու բոլշևիկների թույլտվության պատճառները ▪ բացատրել <<Կաթողիկոսական տեղապահ>>, <<Առաջնորդական վիճակ>> հասկացությունները ▪ բացատրել Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում Խորհրդային իշխանության՝ Հայոց եկեղեցու նկատմամբ դիրքորոշման փոփոխության պատճառները ▪ համեմատել Վազգեն Ա-ին Սահակ Պարթևի հետ	ման նրան ներկայացրած զեկուցագրի և Ստալինի խոստումների մասին ▪ Գևորգ Զ կաթողիկոսի Հայկական հարցի վերարծարծման, սփյուռքի հետ կապերն ամրապնդելու, հոգևոր-մշակութային կյանքը վերականգնելու ուղղությամբ կատարած քայլերի մասին ▪ Երկրորդ աշխարհամարտից հետո Հայոց եկեղեցու պառակտման փորձերի և դրանց ձախողման մասին ▪ միջեկեղեցական հարաբերությունների և միջազգային կապերի ընդլայնման ուղղությամբ Վազգեն Ա կաթողիկոսի ձեռնարկած քայլերի մասին **Կարողանա՝** ▪ վերլուծել Հայոց եկեղեցուն բոլշևիկների բացասական վերաբերմունքի պատճառները ▪ բացատրել Էջմիածնի վանքը փակել թույլ չտալու Մոսկվայի որոշման պատճառները ▪ գնահատել Գևորգ Զ կաթողիկոսի գործունեությունը ▪ գնահատել անկախ պետականության վերականգնման համար Հայոց եկեղեցու մասնակցության դերը

ԹԵՄԱ VI. ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔԻ ՇՐՋԱՆ		
Եկեղեցին հայոց նորանկախ պետականության ստեղծման և ամրապնդման տարիներին		
Իմանա՝ ▪ Հայոց եկեղեցու՝ արցախյան հերոսամարտերին ունեցած մասնակցության մասին ▪ Հայոց եկեղեցու կողմից հաստատված պատվո բարձր պարգևները **Կարողանա՝** նշել եկեղեցի-պետություն համագործակցության մասին վկայող փաստեր	**Իմանա՝** ▪ Արցախին սատարելու նպատակով Վազգեն Ա-ի արտերկրում ունեցած հանդիպումների, տարբեր միջազգային կառույցներին և ղեկավարներին հղած դիմումների, և դրանց բովանդակության մասին ▪ Հայոց եկեղեցու ներեկեղեցական կյանքը կարգավորելու նպատակով Մայր Աթոռի ծավալած գործունեությունը **Կարողանա՝** ▪ 1990-ական թթ. սկզբներին Հայոց եկեղեցու համար գործունեության համար ստեղծված հնարավորությունները համեմատել նախորդ շրջանի հետ	**Իմանա՝** ▪ 1991թ. հունիսի 17-ին <<ՀՀ-ում խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին>> օրենքի ընդունման և նրա բովանդակության մասին ▪ Արցախյան հերսամարտերին մասնակցած և պարգևատրված հայ հոգևորականների անունները **Կարողանա՝** ▪ գնահատել Արցախյան պատերազմում Հայոց եկեղեցու մասնակցության դերը ▪ արտահայտել և հիմնավորել սեփական վերաբերմունքը 1991թ. հունիսի 17-ի օրենքի նկատմամբ
Հայոց եկեղեցու միասնության ամրապնդումը: Գարեգին Ա		
Իմանա՝ ▪ Գարեգին Ա կաթողիկոսի ընտրության, գահակալման տարեթվերի, Մեսրոպ Մաշտոց դպրատան հիմնադման և դրա նպատակի մասին **Կարողանա՝** ▪ նշել եկեղեցի-պետություն համագործակցության ամրապնդման ուղղությամբ կատարված քայլերը	**Իմանա՝** ▪ Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռների և թեմերի միջև փոխհարաբերությունների, Հայոց եկեղեցու հոգևոր-մշակութային գործունեության մասին **Կարողանա՝** ▪ բացատրել <<էկումենիկ /էկումենյան/ շարժում>> հասկացությունը	**Իմանա՝** ▪ 1990-ական թթ. Հայոց եկեղեցու միջազգային հեղինակության աճի մասին **Կարողանա՝** ▪ համեմատել Վազգեն Ա և Գարեգին Ա կաթողիկոսների գործունեությունը ▪ բացատրել <<մեկ ազգ, մեկ մշակույթ, մեկ եկեղեցի>> թեզիսը

Հայաստանի կրոնական համայնքները		
Իմանա՝ ▪ Հայ կաթոլիկ և հայ բողոքական եկեղեցիների գործունեության աշխուժացման, Հռոմի պապի՝ Հայաստան այցելության մասին **Կարողանա՝** թվարկել Հայաստանում գործունեություն տարածած կրոնական հոսանքների անուններ	**Իմանա՝** ▪ Հայ կաթոլիկ և հայ ավետարանական եկեղեցիների 1990-ական թթ. Հայաստանում ծավալած գործունեության մասին ▪ տարաբնույթ կրոնական հոսանքների Հայաստանում գործունեություն ծավալելու մասին **Կարողանա՝** ▪ բացատրել □հոգեորսություն□ հասկացությունը	**Իմանա՝** ▪ Հայաստանում կաթոլիկ հայերի բնակավայրերը, գործող ավետարանական եկեղեցիներ ունեցող քաղաքները ***Կարողանա՝*** ▪ վերլուծել այն նպաստավոր պայմանները, որոնք հող հանդիսացան աղանդավորական շարժումների՝ Հայաստան թափանցման համար ▪ մեկնաբանել հասարակության որոշ խավերի այդ կազմակերպություններին անդամագրվելու պատճառները
Գարեգին Բ: Վերելքի տարիներ		
Իմանա՝ ▪ Հայոց եկեղեցու 132-րդ հայրապետի անունը, ընտրության տարեթիվը ▪ Գր. Լուսավորչի Հայաստան տեղափոխված մասունքների մասին ▪ Ս. Գր. Լուսավորիչ Մայր եկեղեցու օծման օրն ու տարեթիվը **Կարողանա՝** ▪ գնահատել Գր. Լուսավորչի Հայաստան տեղափոխված մասունքների նշանակությունը Հայոց եկեղեցու համար	**Իմանա՝** ▪ Գարեգին Բ կաթողիկոսի անդրանիկ կոնդակի բովանդակության կարևոր կետերի մասին ▪ Հայաստանում գործող հոգևոր-կրթական հաստատությունները ▪ 1700 ամյակի հոբելյանական տոնակատարության մասին ***Կարողանա՝*** բացատրել Հայոց դարձի հոբելյանական տոնակատարության խորհուրդը:	**Իմանա՝** ▪ Հայաստանում և սփյուքում կառուցված և վերաբացված եկեղեցիների անուններ ▪ Գարեգին Բ կաթողիկոսի պաշտոնական հանդիպումների մասին **Կարողանա՝** հիմնավորել <<Հայոց եկեղեցու պատմություն>> դասընթացի անհրաժեշտությունը

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հիմնական դպրոցն ավարտողը պետք է՝

- Գիտակցի Աստվածաշնչի, որպես քրիստոնեության Սուրբ գրքի դերն ու նշանակությունը իր և մարդկության կյանքում,
- կարևորի ընկերական փոխհարաբերություններում ընկերների հաջողությունները,
- լինի բարի, հոգատար և ընկերասեր,
- ընդունի համակեցության կանոնները,
- սիրի մերձավորներին, հայրենակիցներին,
- սիրի ազգային-հոգևոր կառույցը,
- սիրի իր հայրենիքը, ժողովրդին և իր պատմությունը,
- ունենա բարոյական նկարագիր,
- գիտակցի քրիստոնեության դերը և նշանակությունը մարդկության պատմության մեջ,
- գիտակցի մարդու՝ որպես տիեզերքի ամենասքանչելի ստեղծագործության դերը, հարգի մարդու և քաղաքացու իրավունքները, պայքարի դրանց պահպանման համար,
- ունենա արդարության, լավատեսության զգացում,
- սիրի Մայր եկեղեցին՝ նրա պատմությունը, ստեղծած արժեքները,
- լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքին,
- ընդունի ժողովուրդների կրոնների գոյություն ունեցող տարբերությունները և հարգալից վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների մշակույթի հանդեպ,
- գիտակցի քրիստոնեական-բարոյական արժեքները պահպանելու կարևորությունը,
- լինի քրիստոնեական-բարոյական արժեքների կրողը,
- գիտակցի ազգային-հոգևոր կառույցի դերը և նշանակությունը իր և իր ժողովրդի կյանքում,
- գիտակցի ազգային ավանդույթներին և նորմերին հետևելու անհրաժեշտությունը,
- լինի իր նախնիների ստեղծած հոգևոր արժեքների կրողը,
- լինի հպարտ իր ժողովրդից ստացած ժառանգությամբ,
- գիտակցի անձնական, խմբային և պետական շահերի ներդաշնակեցման անհրաժեշտությունը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

<<Հայոց եկեղեցու պատմության>> դասընթացը և՝ հիմնական, և՝ ավագ դպրոցում բաղկացած է տեսությունից, գործնական աշխատանքներից, ցուցադրումներից (էքսկուրսիաներից):

Բոլոր հոսքերի համար տրվում են գործնական աշխատանքների, ցուցադրումների, ինչպես նաև հանձնարարելի և ինքնուրույն աշխատանքների համար նախատեսված գրականության ցանկեր (էլեկտրոնային գրադարաններ):

Բոլոր հոսքերում հանձնարարվում է վերլուծել տեսական բնույթի խնդիրներ, քննարկել առօրյա կյանքից վերցված օրինակներ, որոնց հիման վրա արվող ընդհանրացումները, քննարկումները և գնահատումները մեծապես կնպաստեն սովորողների մտահորիզոնի ընդլայնմանը և տրամաբանական մտածողության ձևավորմանը:

Դասընթացում կարևորվում է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործումը ինչպես տարբեր պատմական, կրոնական երևույթները համակողմանի ընկալելու, այնպես էլ ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակցվելու առումով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

2. Կրթության մասին ՀՀ օրենքը:
3. Հանրակրթության մասին ՀՀ օրենքը:
4. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2010:

2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Սկզբնաղբյուրներ

5. Աստվածաշունչ
6. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983
7. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987
8. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981
9. Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1989
10. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981
11. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն.թուղթ Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982
12. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Երևան, 198
13. Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971
14. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1991
15. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982
16. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986
17. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Անթիլիաս, 1977 /կամ ցանկացած հրատարակություն/
18. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., Հայաստան, 1969:
19. Ղևոնդ, Պատմություն, Եր., Սովետական գրող, 1982:
20. Կարապետ Պալաթեցի, Ապաշխարություն, Ս.Էջմիածին, 1996Գր. Նարեկացի, Մատյան Ողբերգության, Երևան Նաիրի, 2002 /կամ ցանկացած հրատարություն/
21. Ս.Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, □Գանձասար□ հանդես, 1991
22. Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980:
23. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Եր., 1964:
24. Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880:
25. Կանոնագիրք Հայոց, հ.Ա, Եր., 1964, հ.Բ, Եր., 1971:

Բ. Ուսումնասիրություններ

Հայերեն

26. Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Եր., 2002:
27. Մանկական քրիստոնեական հանրագիտարան, Եր. Արեգ, 1998
28. Վազգեն վարդապետ Պալճյան, Մեր պատարագը, Բուխարեստ, 1945, Ս.Էջմիածին, 1989
29. Գանձասար, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի աստվածաբանական հանդես, հհ. Ա - Ե.:
30. Մուսայելյան Կ., 12 ճանապարհորդություն դարերի խորքը, Եր., 1990:
31. Խաչատրյան Հ., Հանրագիտակ, 1990, 1991:
32. Ավագյան Է., Կորած գաղտնիք, Եր., 1990:

33. Աբրահամ վարդ. Մկրտչյան, Նախաշավիղ քրիստոնեական կրթության, Ուլուբաբյան Բ. Ա., Զրուցարան, Եր., Արևիկ, 1987:
34. Ս. Էջմիածին, 1990:
35. Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցի, Խրատի թանգարան,Էջ,միածին, 1999
36. Բառարան Սուրբ գրոց, Երևան, Ապոլոն, 1992
37. Արշակ տեր Միքայելյան,Հայաստանյայց Սուրբ եկեղեցու քրիստոնեականը, Էջմիածին, 2007
38. Քրիստոնեական,Գանձասար, Երևան, 1994
39. Եզնիկ վրդպ.Պետրոսյան, Հայոց եկեղեցու պատմություն, մաս Ա, Էջմիածին, 1998
40. Եզնիկ վրդպ.Պետրոսյան,Նոր Կտակարանի ներածություն,Էջմիածին, 1996
41. Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ազգապատում, հտ. 1-2, Կ. Պոլիս, 1912-1913, հտ. 3, Երուսաղեմ, 1927 կամ հհ. 1-3, Ս. Էջմիածին, 2001:
42. Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ծիսական բառարան, Երևան, 1992
43. Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Հայոց եկեղեին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը և ներկա կացությունը, Մոնրեալ, 2001
44. Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան1992
45. Խրիմյան Հայրիկ, Դրախտի ընտանիք, Երկեր, Երևանի համալս. հրատ., Եր., 1992
46. Վարդանյան Ռ., Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Եր., 1999:
47. Հայոց Եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք, կազմեց Ռ. Մաթևոսյանը, Ս. Էջմիածին, 1999:
48. Հայոց սրբերը և սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը, Եր., 2001:
49. Պետրոսյան Ե., Հայ եկեղեցու պատմություն, մաս Ա, Ս.Էջմիածին, 1998:
50. Սեպուհ վարդապետ Սարգսյան, Հայոց եկեղեցու խորհուրդներն ու ծեսերը, Գանձասար, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի աստվածաբանական հանդես, հհ. Ա, 1992, Բ, 1992:
51. Քրիստոնեական, կրոնի դասագիրք, Ժ տարի, Գանձասար, մատենաշար, Ս.Էջմիածին, 2002:
52. Տոն Ծննդյան և Աստվածհայտնության, Ս. Էջմիածին, 1999:
53. Կարապետ Պալաթեցի, Ապաշխարություն, Ս.Էջմիածին, 1996:
54. Զաքարիա Ձագեցի և Մովսես Քերթող, Աստվածամոր վերափոխման և նրա պատկերի մասին, Ս.Էջմիածին, 1997:
55. Հոգեթով պատմվածքներ, հ. Բ, Անթիլիա 1985:
56. Ս.Խաչատրյան, Եզնիկ Կողբացին կամքի ազատության մասին, Եր,, 2003:
57. Շնորհք արքեպս. Գալուստեան, Հայազգի սուրբեր, Երևան, 1997
58. Շնորհք արքեպս. Գալուստեան, Աստվածաշունչական սուրբեր, Երևան, 1997
59. Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոները, Եր., Հայաստան, 2000:
60. Հայոց սրբերը և սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտանմունքը, Երևան, 2001
61. Հայկական վարքեր և վկայաբնություններ 5-15-րդ դդ., Երևան, Նաիրի, 1998
62. Վազգեն վրդպ. Պալճյան, Մեր պատարագը, Ս. Էջմիածին, 1989 //կամ ցանկացած հրատարակություն/
63. Գանձասար, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի աստվածաբանական հանդես, հհ Ա-Ե
64. Ժամանակակից աղանդները Հայաստանում, Էջմիածին, 2000
65. Արտակ արքեպս.Մանուկյան,Հայ եկեղեցու տօները, Թեհրան, նաիրի, 1984
66. Խառատյան-Առաքելյան Հրանուշ, Հայ ժողովրդական տոները, Երևան, Հայաստան, 2000

67. Գայանե Անտոնյան, Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու, Հայաստանի Հանրապետության պետական տոներ, հիշատակի օրեր, Վանաձոր 2005
68. Շահե արքեպս. Գասպարյան, Տեսական աստվածաբանություն, Անթիլիաս, Լիբանան, 2000
69. Մաթևոսյան Ռ. Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձիք, Էջմիածին, 1999
70. Վարդանյան Ռ. Հայոց տոնացույցը /4-18-րդ դարեր/ Երևան, 1999
71. Հ.Գ. Ժամկոչյան, Ա.Գ. Աբրահամյան, Ս.Տ Մելիք-Բախշյան, Ս.Պ. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, Երևան 1975, /սկզբից մինչև 18-րդ դարի վերջը/
72. Հայ մշակույթի նշանավոր գործիչները, V-XVIIIդդ., Երևան, 1976
73. Հայ ժողովրդի պատմություն 1- 6- րդ հատ. /ՀՍՍՀ ԳԱ հրատ/.
74. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ,. 1, Եր., 1981:
75. Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցերը, Երևան, 1992:
76. Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, IX-XIII դարերի խաչքարերը, կազմող՝ Ա.Շահինյան, Երևան, 1984:
77. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Եր., 1974-1987:
78. Հայոց սրբերը և սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը, Եր., 2001:
79. Ռ.Մաթևոսյան, Հայկական զինանշաններ, Երևան, 1994:
80. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ,. 1, Եր., 1981:
81. Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցերը, Երևան, 1992:
82. Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, IX-XIII դարերի խաչքարերը, կազմող՝ Ա.Շահինյան, Երևան, 1984:
83. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Եր., 1974-1987:
84. Հայոց սրբերը և սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը, Եր., 2001:
85. Ռ.Մաթևոսյան, Հայկական զինանշաններ, Երևան, 1994:

Ռուսերեն

86. Основы религиоведения, М., 1994.
87. Радугин А., Введение в религиоведение, М., 1996.
88. История религий. X-XI классы, пособие для учащихся общеобразовательных учебных заведений, М., Просвещение, 1997.
89. История религий, X-XI классы, пособие для учащихся общеобразовательных учебных заведений, М., Дрофа, 1997.
90. Основы религиоведения, М., 1994.
91. Радугин А., Введение в религиоведение, М., 1996.
92. Аристотель, Никомахова, Этика, Большая этика, сочинение в 4-х тт, т.4, Москва, 1984.
93. Л. Гумилев, КОнец и вновь начало, Москва, 1997.
94. История религий, X-XI классы, пособие для учащихся общеобразовательных учебных заведений, М., Дрофа, 1997.
95. С. Лурье, Историческая характеристика, Ереван, 2001.
96. Л. Мелик-Шахназаров, Характер армянского народа, Ереван, 1999.

97. А. Налчаджян, Этническая характерология, Ереван, 2001.
98. Основы религиоведения, М., 1994.
99. Очерки истории этики, Под редакцией Б.Чагина, Москва, 1969.
100. Протоиерей Евгений Шестун, Православная педагогика, М., 2002.
101. Радугин А., Введение в религиоведение, М., 1996.
102. С. Хантингтон, Столкновение цивилизаций, Москва, 2003.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
«ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ
V-IX ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Նպատակը և խնդիրները

Հանրակրթական հիմնական դպրոցի <<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկայի 5-9-րդ դասարանների ծրագիրը կազմվել է հիմք ընդունելով <<Կրթության մասին>> և <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքները, Հանրակրթության պետական չափորոշչի և հանրակրթական հիմնական դպրոցի <<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկայի չափորոշչի հայեցակարգային դրույթները, սկզբունքները և պահանջները>>:

Հայոց պատմության մեջ Հայ Առաքելական եկեղեցու դերը բացառիկ է: Վիթխարի է նրա ներդրումը հայոց հոգևոր, կրթամշակութային արժեքների պահպանման, հայոց պետականության ամրապնդման և զարգացման, ազգապահպանության գործում:

Հայոց եկեղեցու շնորհիվ քրիստոնեությունը դարձել է հայ ժողովրդի ազգային նկարագրի անբաժանելի մասը:

Հայ ժողովրդի ազգային-հոգևոր կառույցը լինելով հանդերձ՝ Հայոց եկեղեցին միաժամանակ քրիստոնեական ընդհանրական եկեղեցու մի մասն է և արժեհամակարգային բազմաթիվ ընդհանրություններ ունի քրիստոնեական համամարդկային հիմնարար արժեքների (ազատություն, արդարություն, հանդուրժողականություն, հարգանք առ մերձավորը…) հետ:

Դասընթացի նպատակն է՝ ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելու ու հաղորդակից դարձնելու միջոցով նպաստել աճող սերնդի ազգային-հոգևոր նկարագրի ամբողջացմանը:

Այս խնդիրն առանձնակի կարևորություն ունի նաև նոր սերնդին ընդհանուր բարոյական արժեքները և հասկացությունները փոխանցելու առումով, քանի որ ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում եկեղեցին համամարդկային արժեքներ կրող կարևորագույն ինստիտուտ է: Հետևաբար, դասընթացն իր կարևոր նպաստը կբերի սովորողների ընդհանուր աշխարհայացքի, հոգեբանության և բարոյական ըմբռնումների ներդաշնակ ձևավորմանը:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետություն են մուտք գործել տոտալիտար, դեստրուկտիվ (ամբողջատիրական, քայքայիչ, ապակառուցողական) միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից բազմիցս քննադատված կրոնական տարաբնույթ հոսանքներ, որոնք լուրջ նկրտումներ ունեն հանրակրթական ոլորտ ներթափանցելու և այստեղ արմատավորվելու:

Դասընթացի նպատակն է նաև աճող սերնդին հեռու պահել վերոնշյալ բացասական երևույթներից:

Հայաստանի անկախացումից հետո հասարակության մեջ մեծ հետաքրքրություն առաջացավ Հայոց եկեղեցու պատմության, նրա կառույցի, դավանանքի և ընդհանրապես կրոնի ոլորտի նկատմամբ: Հանրակրթական որոշ հաստատություններում տարերայնորեն ներդրվեցին զանազան ծրագրեր (Հայ Առաքելական եկեղեցու պատմութուն, Կրոնի պատմություն, Կրոնագիտություն և այլն), որոնք ապահովված չէին որակյալ և անհրաժեշտ ծրագրերով ու դասագրքերով, դասընթացները պետականորեն չէին սպասարկվում:

Դասընթացի նպատակն է՝ այս ոլորտում մշակել գիտամանկավարժական այնպիսի մոտեցումներ, որոնց հիմքում ընկած են մանկավարժության հիմնարար սկզբունքները՝ մատչելիություն, շարունակա-

կանություն, տարիքային առանձնահատկությունների հաշվառում, ինտեգրում այլ առարկաների հետ և այլն:

Հայագիտական առարկաների՝ հայոց պատմության, հայոց լեզվի, հայ գրականության դասավանդումը, և սովորողի կողմից դրանց ամբողջական ընկալումն առանց Հայոց եկեղեցու պատմության իմացության՝ որոշ առումով մնում է թերի:

Դասընթացի նպատակն է՝ ամբողջացնել հայագիտական առարկաների՝ հայոց պատմության և մշակույթի հետ կապված հարցերի շրջանակը՝ ամրապնդելով այդ առարկաներից սովորողների գիտելիքները, լրացուցիչ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել, ինչպես նաև վեր հանել բազմաթիվ իրադարձությունների և երևույթների ընթացքը պայմանավորող հոգևոր-եկեղեցական գործոնները:

Հայ ժողովուրդն ավանդաբար և պետականորեն յուրաքանչյուր տարի նշել և հիմա էլ նշում է ավելի քան երկու տասնյակ տոներ: Այս դասընթացը կօգնի սովորողին հասկանալու այդ տոների և արարողությունների ազգային-եկեղեցական, պատմական և դաստիարակչական իմաստը:

Դասընթացը կօգնի նաև ստուգաբանել մեր կյանքի ու կենցաղի բազմաթիվ հարցեր, որոնց բացատրությունը կապված է ազգային-եկեղեցական ավանդույթների հետ:

Հայաստանի Հանրապետությունն ընդգրկված է համաշխարհային քաղաքակրթական նշանակություն ունեցող այնպիսի խոշոր գործընթացների մեջ, որոնց ազդեցությունն ակնհայտ է մշակույթի և հոգևոր-բարոյական հարցերի բնագավառում:

<<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկան կօգնի ընկալելու արևմտյան, մասնավորապես համաեվրոպական կյանքի շատ արժեքներ, որոնք նույնպես կապված են քրիստոնեության հետ:

<<Հայոց եկեղեցու պատմություն>> առարկայի բովանդակությունը հիմնական դպրոցում ըստ դասարանների բաշխվում է հետևյալ կերպ.

V դասարան – Աստվածաշունչ մատյան

VI դասարան – Քրիստոնեական եկեղեցի, Քրիստոնեության հիմնական ուղղությունները, Հայոց եկեղեցու նվիրապետությունը, խորհուրդները և տոները

VII-VIII-IX դասարաններ – Հայոց եկեղեցու համակարգված պատմությունը՝ սկզբնավորումից XXI դարի սկիզբ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

V-IX ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

V ԴԱՍԱՐԱՆ
(34 ժամ)

Ներածություն **(1 ժամ)**
Դասընթացի անհրաժեշտությունը: Դասագրքի կառուցվածքը

ԹԵՄԱ 1. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆ **(2 ժամ)**
Աստվածաշունչ
Աստվածաշունչը որպես քրիստոնյաների Սուրբ գիրք: Հին կտակարան: Նոր կտակարան: Աստվա-ծաշնչի թարգմանությունը և տարածումը: Աստվածաշունչը հայերի և Հայաստանի մասին:

ԹԵՄԱ 2. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ **(10 ժամ)**
Աշխարհի և մարդու ստեղծումը
Արարչագործություն: Ադամ և Եվա:
Նոյը և ջրհեղեղը
Նոյ նահապետ: Տապանի կառուցումը: Ջրհեղեղ:
Արարատ լեռը
Նոյն իջնում է Արարատից: Արարատը և Նոյի սերունդները: Հաբեթը, Սեմը, Քամը: Արարատը հայերի համար:
Բաբելոնի աշտարակաշինություն
Նոյի սերնդի տարածումը: Բաբելոնի աշտարակաշինությունը: Հայկ և Բել:
Հայաստանն Աստվածաշնչում
Հայկական լեռնաշխարհը արարչագործության վայր: Հայաստանը Սուրբ Գրքում:
Աբրահամը և նրա սերունդները
Աբրահամ: Մովսես Մարգարե: Աստծու պատվիրանները:
Թագավորները: Բաբելոնյան գերություն
Դավիթ թագավոր: Սողոմոն իմաստուն: Բաբելոնյան գերություն:
Մարգարեներ
Կրկնություն **(1 ժամ)**

ԹԵՄԱ 3. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ **(17 ժամ)**
Հիսուս Քրիստոսի ծննդյան ավետումը
Մարիամ Աստվածածին: Հրեշտակի ավետիսը:
Հիսուս Քրիստոսի ծնունդը
Հիսուսի ծնունդը: Հովիվների այցը: Մոգերի երկրպագությունը: Փախուստ դեպի Եգիպտոս:
Պատանի Հիսուսը տաճարում
Պատանի Հիսուսը:Հիսուսը զրուցում է վարդապետների հետ:

Հիսուս Քրիստոսի մկրտությունը

Հովհաննես Մկրտչի ծնունդը: Հովհաննեսի քարոզչությունը: Հիսուսի մկրտությունը:

Հիսուս Քրիստոսի փորձությունները

Առաջին փորձությունը: Երկրորդ փորձությունը: Երրորդ փորձությունը:

Տասներկու աշակերտների ընտրությունը

Հիսուսի կողմից աշակերտների ընտրությունը: Տասներկու առաքյալները:

Հիսուսը օգնում է մարդկանց

Հրաշքներ: Խրատները: <<Ոսկե կանոն>>:

Իմաստուն խորհուրդներ

Հիսուսը՝ ուսուցիչ և վարդապետ: Հիսուսի խրատները: Սիրել ծնողներին: Բարեկամություն: Ազնվություն և պարկեշտություն: Իմաստություն:

Ամենամեծ նվերը

Այրի կնոջ լուման: Պարկեշտություն և գոռոզամտություն: Հիսուսը և երեխաները:

Կրկնություն (1 ժամ)

Սերմնացանի առակը

Սերմնացանի մասին առակը: Հիսուսը բարի սերմնացան: Առակի մեկնաբանությունը:

Որոմների առակը

Առակի բովանդակությունը: Մեկնաբանությունը:

Ճշմարիտ բարեկամը

Բարի սամարացու մասին առակը: Առակի մեկնաբանությունը:

Մոլորյալ որդու վերադարձը

Մոլորյալ որդու մասին առակը: Մեկնաբանությունը:

Հիսուսի մուտքը Երուսաղեմ

Հիսուսը գնում է Երուսաղեմ: Առևտրականների վտարումը տաճարից:

Վերջին ընթրիքը

Վերջին ընթրիքից առաջ: Խորհրդավոր ընթրիքը: Ոտնլվա: Հիսուսի մատնությունը:

Հիսուս Քրիստոսի խաչելությունը

Հիսուսը Պիղատոսի առջև: Մահվան դատավճիռը: Ճանապարհ դեպի Գողգոթա: Խաչելությունը:

Հիսուսի հարությունը և Համբարձումը:

Հիսուսի թաղումը: Հարությունը: Համբարձումը:

Կրկնություն (1 ժամ)

Ամփոփում (1 ժամ)

VI ԴԱՍԱՐԱՆ
(34 ժամ)

Ներածություն **(1 ժամ)**

Հայ ժողովրդի պատմության մեջ Հայոց եկեղեցու դերի և նշանակության մասին:

ԹԵՄԱ 1. ԵԿԵՂԵՑԻ (4 ժամ)

Եկեղեցի

Բառի բացատրությունը: Եկեղեցու հիմնադրումը: Հոգևորականություն: Եկեղեցին որպես շինություն:

Քրիստոնեության հիմնական ուղղությունները

Եկեղեցիների հիմնադրումը առաքյալների կողմից: Տիեզերական ժողովներ: Քրիստոնեության տարբեր ուղղությունների առաջացումը: Արևելյան ուղղափառ եկեղեցիներ: Օրթոդոքս եկեղեցիներ: Կաթոլիկ եկեղեցի: Բողոքականություն:

ԹԵՄԱ 2. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ (4 ժամ)

Հայ առաքելական եկեղեցու նվիրապետությունը

Նվիրապետություն բառի բացատրությունը: Նվիրապետական աստիճանները, դրանց շնորհման կարգը: Կուսակրոն հոգևորականներ: Կաթողիկոս, եպիսկոպոս, քահանա, սարկավագ:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու վարչական կառույցը

Ընդհանուր պատկերացում Հայոց եկեղեցու վարչական կառույցի վերաբերյալ: Հայոց եկեղեցու բարձրագույն վարչական մարմինը: Հայոց եկեղեցու պատմականորեն ձևավորված կառույցները (Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքություններ):

Հայկական եկեղեցիների ճարտարապետական կառուցվածքը

Հայկական եկեղեցիների արտաքին և ներքին կառուցվածքը:

Կրկնություն **(1 ժամ)**

ԹԵՄԱ 3. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ (6 ժամ)

Հայոց եկեղեցու խորհուրդները

Յոթ խորհուրդները: Ձեռնադրություն: Կարգ հիվանդաց:

Մկրտություն և Դրոշմ

Մկրտության խորհրդի իմաստը: Արարողությունը: Դրոշմի խորհուրդը:

Ապաշխարություն

Ապաշխարության խորհրդի իմաստը: Խորհրդի կատարման կարգը:

Հաղորդություն

Հաղորդության խորհրդի իմաստը: Խորհրդի հաստատումը: Արարողակարգը:

Պսակ

Պսակի խորհրդի իմաստը: Արարողակարգը:

Կրկնություն **(1 ժամ)**

ԹԵՄԱ 4. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ (15 ժամ)

Ընդհանուր ակնարկ եկեղեցական տոների մասին

Տոն հասկացությունը: Տերունական տոներ: Շարժական և անշարժ տոներ: Սրբերին նվիրված տոներ: Պահքի օրեր:

Ավետման և Ծննդյան տոները

Ավետման տոնը. իմաստը և նշանակությունը: Սուրբ Ծնունդ տոնը. իմաստը և նշանակությունը: Տոնակատարությունները:

Տյառնընդառաջ

Տյառնընդառաջ բառի բացատրությունը: Տոնի իմաստը: Տոնակատարությունը:

Քրիստոսի Պայծառակերպության տոնը: Վարդավառ

Պայծառակերպություն բառի բացատրությունը: Տոնի իմաստը: Տոնակատարությունը:

Ծաղկազարդ

Տոնի իմաստը: Տոնակատարությունը:

Սուրբ Հարություն կամ Զատիկ

Հիսուս Քրիստոսի հարությունը: Տոնի նշանակությունը: Տոնակատարությունը:

Համբարձման տոնը

Հիսուս Քրիստոսի համբարձումը: Տոնի նշանակությունը: Տոնակատարության նկարագրությունը Թումանյանի <<Անուշ>> պոեմում:

Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը: Խաղողօրհնեք

Վերափոխում բառի բացատրությունը: Տոնի իմաստը: Խաղողօրհնեք: Տոնակատարությունը:

Կրկնություն (1 ժամ)

Խաչվերաց տոնը

Խաչափայտի գերությունը և ազատումը: Խաչվերաց բառի բացատրությունը: Տոնի իմաստը: Տոնակատարությունը:

Բուն Բարեկենդան

Հովհ. Թումանյանի <<Բարեկենդանը>> հեքիաթը և տոնը: Տոնի իմաստը: Պահք բառի բացատրությունը: Պահքի կարևորությունը:

Սուրբ Սարգիս

Սուրբ Սարգսի մասին: Տոնակատարությունը (աղի բլիթ):

Սուրբ Վարդանանց տոնը

Վարդանանք և Ավարայրի ճակատամարտը: Տոնակատարությունը:

Սուրբ Էջմիածնի տոնը

Գրիգոր Լուսավորչի տեսիլքը: Մայր տաճարը: Տոնակատարությունը:

Վարագա Սուրբ Խաչի տոնը

Սուրբ մասունքը: Տոնը:

Թարգմանչաց տոնը

Սուրբ թարգմանիչներ: Գրերի գյուտը: Աստվածաշնչի թարգմանությունը: Տոնակատարությունը:

Ամփոփում (1 ժամ)

VII ԴԱՍԱՐԱՆ
(34 ժամ)

Ներածություն **1 ժամ**

ԹԵՄԱ I. ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆՆԵՐ (3 ժամ)

Հին հայոց նախաքրիստոնեական հավատալիքները 1 ժամ

Բնության երևույթների պաշտամունքը: Տոտեմիզմ

Հայոց աշխարհաստեղծման առասպելը

Հեթանոսական դարաշրջանի առասպելները

Հայոց հեթանոսական դիցարանը

Վանի թագավորության դիցարանը

Հին Հնդկական և Զրադաշտական կրոնը 1 ժամ

Աշխարհի ստեղծման հին հնդկական առասպելը

Աշխարհի ստեղծման զրադաշտական առասպելը

Զրադաշտի առաքելությունը

Հունա-հռոմեական դիցարանը և Հելլենիստական դարաշրջանի կրոնը 1 ժամ

Հունական դիցարանը

Հռոմեական դիցարանը

Արևելքի և Արևմուտքի կրոնական միավորումը և հելլենիստական դիցարանը

ԹԵՄԱ II. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ (5 ժամ)

Քրիստոնեության տարածման պատմական պայմանները 1 ժամ

Պատմական ժամանակաշրջանը

Քրիստոնեական առաջին համայնքները

Քրիստոնեության տարածումը

Քրիստոնեության մուտքը Հայաստան: Հայոց առաջին լուսավորիչները 2 ժամ

Թադևոս առաքյալի քարոզչությունը Հայաստանում և նահատակությունը

Բարդուղիմեոս առաքյալի քարոզչությունը Հայաստանում և նահատակությունը

Քրիստոնեության տարածումը Հայաստանում I-III դարերում 2 ժամ

Հայաստանի եպիսկոպոսական աթոռներն ու առաջին եպիսկոպոսները

Հալածանքներ քրիստոնյաների դեմ

Կրկնություն 1 ժամ

ԹԵՄԱ III. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ (4 ժամ)

Քրիստոնեության հռչակումը որպես պետական կրոն 2 ժամ

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու նախադրյալները

Ս. Գրիգոր Լուսավորիչ: Հռիփսիմյան կույսերի նահատակությունը

Ս. Գրիգոր Լուսավորիչը՝ Հայոց առաջին հայրապետ 2 ժամ

Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունն ու գահակալությունը

Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը և Մայր տաճարի կառուցումը
Քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը

ԹԵՄԱ IV. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ (9 ժամ)

Հայոց եկեղեցական կառույցի ձևավորումը 2 ժամ
Քրիստոնեական առաջին դպրոցները
Հայոց եկեղեցու նվիրապետության ձևավորումը
Ս. Գրիգոր Լուսավորչի հետագա գործունեությունը

Հայոց եկեղեցին Ս. Գրիգոր Լուսավորչի հաջորդների օրոք 1 ժամ
Արիստակես, Վրթանես և Հուսիկ կաթողիկոսներ
Քրիստոնեության տարածումը Աղվանքում:

Ս. Ներսես Մեծ: Աշտիշատի ժողովը: 1 ժամ
Ս. Ներսես Մեծի գահակալության սկիզբը
Աշտիշատի ժողովը

Պետություն – եկեղեցի հարաբերությունները IV դարի երկրորդ կեսին: 1 ժամ
Պետություն – եկեղեցի հարաբերությունները
Ս. Ներսես Մեծի գահակալության վերջին շրջանը
Ս. Ներսես Մեծի գործունեության նշանակությունը

Հայոց եկեղեցու ամրապնդումը: Ս.Սահակ Պարթև և Ս. Մեսրոպ Մաշտոց: 2 ժամ
Սահակ Պարթևի գահակալությունը:
Քրիստոնեության ամրապնդման հիմնախնդիրը:
Մեսրոպ Մաշտոց: Գրերի գյուտը
Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ վարդապետի գրական-մշակութային ժառանգությունը:

Տիեզերական ժողովները 2 ժամ
Նիկիայի ժողովը
Կոստանդնուպոլսի ժողովը
Եփեսոսի ժողովը

Կրկնություն 1 ժամ

ԹԵՄԱ V ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ V-IX ԴԱՐԵՐՈՒՄ (9 ժամ)

Հայոց եկեղեցին հավատի և հայրենիքի պաշտպան 3 ժամ
Շահապիվանի ժողովը: Հովսեփ Ա Հողոցմեցի
Արտաշատի ժողովը : □Եղծ աղանդոց□
Առաջին քրիստոնեական մեծ պատերազմը:
Ճակատամարտին հաջորդող դեպքերը:
Վահանանց շարժումը և հանուն հավատի մղված պայքարի հաղթանակը:

Քաղկեդոնի ժողովը, ընդհանրական եկեղեցու բաժանումը և Հայոց եկեղեցին: 2 ժամ
Քաղկեդոնի ժողովը
Հայոց եկեղեցու դիրքորոշումը
Դվինի I և II ժողովները

Հայոց եկեղեցու փոխհարաբերությունները Վրաց ու Աղվանից եկեղեցիների հետ V-VII դարերում **2 ժամ**

Վրաց եկեղեցու առանձնացումը

Աղվանից եկեղեցու կազմավորումը

Վաչագան Բարեպաշտ թագավորը: Աղվենի ժողովը

Աղվանից կաթողիկոսությունը VI դարում

Իսլամ: **1 ժամ**

Իսլամի ծագումը

Իսլամի տարածումն ու դավանանքը

Ս. Հովհան Օձնեցին և պավլիկյան աղանդավորական շարժումը **1 ժամ**

Արաբական գերիշխանությունը և պավլիկյանները

Ս. Հովհաննես Գ Օձնեցի

Ամփոփում 1 ժամ

VIII ԴԱՍԱՐԱՆ
(34 ժամ)

Ներածություն **1 ժամ**

ԹԵՄԱ I. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ (10 ժամ)

Հայոց եկեղեցու դերն անկախության վերականգնման և ամրապնդման գործում 3 ժամ

Շիրակավանի ժողովը: Զաքարիա Զագեցի

Գևորգ Բ Գառնեցի

Հովհաննես Ե Դրասխանակերտցի: Կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը Դվինից Աղթամար

Հայոց եկեղեցին Բագրատունյաց թագավորության վերելքի ժամանակաշրջանում: 2 ժամ

Անանիա Ա Մոկացիու գործունեությունը: Պայքար Սյունյաց և Աղվանից աթոռների անջատողական ձգտումների դեմ

Խաչիկ Արշարունու գործունեությունը

Հոգևոր և մշակութային վերելքը X դարում

Մայրաքաղաք և կաթողիկոսանիստ Անիի ծաղկումը: Սարգիս Ա Սևանցի 2 ժամ

Սարգիս Ա Սևանցու աթոռակալության շրջանը

Անին որպես հոգևոր մայրաքաղաք

Հայոց եկեղեցին Բագրատունյաց թագավորության անկման շրջանում 1 ժամ

Անիի թագավորությանը սպառնացող վտանգները և Հայոց եկեղեցին

Պետրոս Գետադարձ

Հայոց եկեղեցու նկատմամբ գործադրված ճնշումներն ու հալածանքները Բագրատունյաց թագավորության անկումից հետո 2 ժամ

Հայոց կաթողիկոսական աթոռի դեգերումները

Կաթողիկոսական աթոռի վերականգնումը Անիում

Կրկնություն **1 ժամ**

ԹԵՄԱ II. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ (7 ժամ)

Հայոց եկեղեցու կազմակերպումը Կիլիկյան Հայաստանում 2 ժամ

Հայոց եկեղեցու կառույցների ձևավորումը Կիլիկիայում

Հայրապետական աթոռի հաստատումը Հռոմկլայում

Կաթողիկոսների ընտրության նոր կարգը

Կիլիկյան արքունիքի և Հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունները

Խառնակ շրջան

Հայ-հռոմեական և հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները 2 ժամ

Հայ-հռոմեական եկեղեցական հարաբերությունները

Հայ և Բյուզանդական եկեղեցիների միավորման խնդիրը

Հռոմկլայի եկեղեցական ժողովը

Հայոց եկեղեցին Զաքարյան Հայաստանում 2 ժամ

Հայոց եկեղեցու կազմակերպումը Զաքարյան Հայաստանում

Եկեղեցու հոգևոր-մշակութային գործունեությունը

Կիլիկյան Հայաստանի և Մեծ Հայքի եկեղեցական հարաբերությունները
Սսի 1243 թ. եկեղեցական ժողովը
Քրիստոնեական եկեղեցիների միավորման փորձերը 1 ժամ
Հայրապետական աթոռի հաստատումը Սսում
Պայքար եկեղեցիների միավորման փորձերի դեմ

Կրկնություն 1 ժամ
ԹԵՄԱ III. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ (13 ժամ)
Հայոց եկեղեցին XIV դարի վերջերին և XV սկզբին 1 ժամ
Հայոց եկեղեցին և միարարական շարժումը
Հայոց եկեղեցին և պապականությունը
Կաթողիկոսական աթոռը Կիլիկիայի Հայոց թագավորության անկումից հետո
Կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Էջմիածնում 2 ժամ
Կաթողիկոսական աթոռի տեղափոխման անհրաժեշտությունը
1441 թ. Ազգային-եկեղեցական ժողովը և կաթողիկոսական աթոռի տեղափոխումը
Հայոց եկեղեցու նվիրապետությունը 2 ժամ
Ամենայն Հայոց կաթողիկոսությունը
Աղվանից կաթողիկոսությունը
Աղթամարի կաթողիկոսությունը
Սսի կաթողիկոսությունը
Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը
Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը
Մետրոպոլիտությունը
Եպիսկոպոսությունները
Հայոց եկեղեցին և հայ ազատագրական շարժումը XV- XVII դարերում 2 ժամ
Հայկական պետականության վերականգնման փորձ XV դարի կեսերին
Հայաստանն ազատագրելու ծրագրերը: Ստեփանոս Սալմաստեցի: Միքայել Սեբաստացի
Հոգևոր-մշակութային կյանքի զարթոնքը: Մովսես Գ Տաթևացի 2 ժամ
Հայկական տպագրության սկզբնավորումը
Մայր աթոռի և հոգևոր-մշակութային կյանքի զարթոնքը: Մովսես Գ Տաթևացի
Հակոբ Ջուղայեցի: Ս. Էջմիածնի 1677 թվականի գաղտնի խորհրդաժողովը
Կաթոլիկ շարժումը հայոց մեջ: Մխիթարյանք 2 ժամ
Կաթոլիկության տարածումը հայերի մեջ
Մխիթար Սեբաստացին և Մխիթարյանք
Հայոց եկեղեցին XVIII դարում 2 ժամ
Հայոց եկեղեցին XVIII դարի առաջին կեսին: Սիմեոն Երևանցի
Հայոց եկեղեցին XVIII դարի վերջին

Ամփոփում 1 ժամ

IX ԴԱՍԱՐԱՆ
(34 ժամ)

Ներածություն 1 ժամ

ԹԵՄԱ I. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՎ 1860-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ (6 ժամ)

Հայոց եկեղեցին XIX դարի սկզբին 2 ժամ

Ռուսաստանը և Հայոց եկեղեցին

Դանիել Սուրմառեցին և Սինոդի ստեղծումը

Նվիրապետական աթոռները XIX դարի սկզբին

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Ներսես Ե Աշտարակեցի 1 ժամ

Ներսես Աշտարակեցու գործունեությունը 1826-1828 թթ.

Ներսես Աշտարակեցին Հայոց կաթողիկոս

Ներսես Ե կաթողիկոսը և արևմտահայությունը: Ներսես Աշտարակեցու հոգևոր-մշակութային գործունեությունը

Ցարական կառավարությունը և Հայոց եկեղեցու փոխհարաբերությունների իրավական կարգավարումը 1 ժամ

Կանոնադրության երկու նախագծերը

<<Պոլոժենիե>>

Հայոց ազգային եկեղեցական կյանքը 1820-60-ական թթ. 2 ժամ

Հայ կաթոլիկ եկեղեցու առանձնացումը և նկրտումները

Հայ բողոքական եկեղեցին

Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի

ԹԵՄԱ II. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ՊԱՅՔԱՐ ՌՈՒՍԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ - XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) (4 ժամ)

Հայոց եկեղեցու կրթամշակութային ձեռնարկները 2 ժամ

Հայոց եկեղեցին՝ կրթության գործի կազմակերպիչ

□Արարատ□ ամսագրի հրատարակումը

Պայքար հայկական դպրոցների վերաբացման համար

Հայոց եկեղեցու պայքարը ցարական ինքնակալության դեմ: Մկրտիչ Ա Խրիմյան 2 ժամ

Հայոց եկեղեցու պայքարը ցարական ինքնակալության դեմ

Հայոց եկեղեցին հայ-թաթարական ընդհարումների ժամանակ

Եկեղեցու բարեկարգման անհրաժեշտությունը

Կրկնություն 1 ժամ

ԹԵՄԱ III. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ (4 ժամ)

Հայոց եկեղեցին և Հայկական հարցը 1 ժամ

Հայկական հարցի միջազգայնացումը և Հայոց եկեղեցին

□Երկաթե շերեփի□ խորհուրդը

Եկեղեցու մասնակցությունը XIX դ. վերջի և XX դ. սկզբի ազատագրական պայքարին 1 ժամ
Հայ հոգևորականության մասնակցությունը ազատագրական շարժմանը
Խանասորի արշավանքը
Մ. Խրիմյանի ազգանվեր գործունեությունը
Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը և Հայկական հարցի վերաբացումը 1 ժամ
Հայոց Մեծ եղեռնը և եկեղեցին 1 ժամ
Հայոց ցեղասպանությունը և Հայոց եկեղեցին
Արևմտահայ գաղթականությունը և Հայոց եկեղեցին

ԹԵՄԱ IV. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (3 ժամ)
1918 թվականի հերոսամարտերը և եկեղեցին 1 ժամ
Հայոց եկեղեցու մասնակցությունը Մայիսյան հերոսամարտերին
Եկեղեցու գործունեությունը 1918-1920 թվականներին 2 ժամ
Հայոց եկեղեցու գործունեությունը անկախ պետականության կառուցման տարիներին
Եկեղեցի-պետություն □դաշնագիրը□
Ներեկեղեցական կյանքի բարենորոգության հարցը

ԹԵՄԱ V. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (6 ժամ)
Խորհրդային իշխանության քաղաքականությունը եկեղեցու նկատմամբ 1 ժամ
Հայոց եկեղեցին և խորհրդային իշխանությունը
Բռնություններ և հալածանքներ: Եկեղեցիների փակումը
Հալածանքների նոր շրջան: Խորեն Ա Մուրադբեկյան 1 ժամ
Բոլշևիկյան իշխանությունները և կաթողիկոսի ընտրությունը
Հայոց կաթողիկոսության վերացման փորձերը: Խորեն կաթողիկոսի սպանությունը
Հայոց եկեղեցին Երկրորդ աշխարհամարտի տարիներին 1 ժամ
Եկեղեցին Հայրենական պատերազմի նախօրյակին
Եկեղեցին Հայրենական պատերազմի տարիներին
Կաթողիկոսական ընտրություններ: Գևորգ Զ Չորեքչյան 1 ժամ
1945 թ. Ազգային-եկեղեցական ժողովը
Գևորգ Զ Չորեքչյան
Աշխատանքներ՝ սփյուռքի հետ կապերը վերականգնելու և հոգևոր-մշակութային կյանքը վերականգ-նելու ուղղությամբ
Հայոց եկեղեցու վերելքը: Վազգեն Ա 2 ժամ
Վազգեն Ա Պալճյան (1955-1994)
Վազգեն Ա-ի եկեղեցաշինական հոգևոր-մշակութային գործունեությունը
Ազգային նոր շարժումը և Հայոց եկեղեցին

Կրկնություն 1 ժամ

ԹԵՄԱ VI. ՎԵՐԱԶԱՐԹՈՆՔԻ ՇՐՋԱՆ (7 ժամ)

Եկեղեցին հայոց նորանկախ պետականության ստեղծման և ամրապնդման տարիներին 2 ժամ

Մասնակցությունը արցախյան ազատամարտին

Եկեղեցի – պետություն փոխհարաբերությունները

Ներեկեղեցական կյանքը

Հայոց եկեղեցու միասնության ամրապնդումը: Գարեգին Ա 2 ժամ

Գարեգին Ա Սարգսյանի ընտրությունը

Եկեղեցի – պետություն համագործակցության ամրապնդումը

Եկեղեցու ներքին միասնության ամրապնդումը: Հոգևոր-մշակութային գործունեության ընդլայնումը

Եկեղեցու միջազգային հեղինակության աճը

Հայաստանի կրոնական համայնքները 2 ժամ

Հայ կաթողիկե եկեղեցին

Հայ ավետարանական եկեղեցին

Տարաբնույթ կրոնական հոսանքներ

Գարեգին Բ: Վերելքի տարիներ 1 ժամ

Հայոց 132-րդ հայրապետի ընտրությունը

Գարեգին Բ կաթողիկոսի գործունեությունը

1700-ամյակի տոնակատարությունը

Եկեղեցի – պետություն հարաբերությունները

Ամփոփում 1 ժամ>>